

ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ :
 ԸՆԿԵՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ : Կնոջ դերը մարդկային ընկե-
 րուծեան մէջ : Տ. ԵՌԱՍՈՒՅԵԱՆ
 * * *
 ՎԻՊԱԿԱՆ : Երագի մը գինը.....
 ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ : Ազատութեան արծաճն ի նիւ-եօրք
 ԳԻՏԱԿԱՆ : Առանց գործիքի ելեկտրականութիւն.....
 ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ : Փեսայներ (սիրտ)..... ԲԱՄԱՌ-ՔԱԹՊԱ
 ԱՐՀԵՍՏԱԿԱՆ : Եւրոպայի անտառաց վիճակը..... Ռ.
 ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ : Արտաքին, ներքին, Ազ-
 գային

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս եւ գաւառներու — տարեկան..... Կէս ոսկի Օսմ.
 » » վեցամսեայ..... Քառորդ ոսկի Օսմ.
 Մէկ թերթին գինն է..... 60 փարայ
 Օտար քաղաքաց համար տարեկան..... 12 ֆրանք
 » » » վեցամսեայ..... 6 »
 Թատարութեան ծախք — տարեկան..... Դահ. արծ. 15
 վեցամսայ..... » » 7 1/2

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է
 ուղղել առ

Խմբագրութիւն Արեւիկէ և Մասիս լրագրաց
 Ղալաթիա, Կորառունիկեան խան

Կ. ՊՅԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

Ս. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ԵԼԵԿՏՐՈԿԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՌԱՆՑ ՅԱՒԻ

ԱԿՈՍՆՈՒԹԻՒՆ

ԹԻ- 1, Պահէ - ԲԵՐ, Կոստանդնուպոլիս

Դարուս ամենամեծ գիտերէն մէկն է անտարակոյս ելեկտրական զօրութեան կիրառութիւնն յօգուտ մարդկային պիտոյից: Ասոնց մէջ թերեւս կարեւորագոյն է այն արգիւնքն զոր կը մատուցանէ նա գործնական բժշկութեան, յորոց մի է նաև ատամնաբուժութեան տուած նոր և հրաշալի օժանդակութիւնն: Այս է ելեկտրական պրցանն, ճարտարարուեստ հնարք որով կ'անհետանան ամէն խոշ և խուժ, ցաւ կամ տագնապ որք ակռայ հանելու դործողութիւնն այնքան դժուարամբձ կ'ընէին հասարակաց: Այստեղեւ շնորհիւ ելեկտրական գործւոյն, ակռայ հանելն դիւրամատոյց կ'ընծայուի փափկագոյն մարդոց իսկ, յորոց յական թօթափել անզգայաբար կ'ելլեն ատամնւնք, առանց որ և է փոքրագոյն ցաւ մը պատճառելու: Ելեկտրական ատամնահանութիւնն դեռ հազիւ երեւեալ յԱմերիկա, արդէն իսկ սահմանեալ է մարդկային ազգիս մեծ ծառայութիւն մատուցանելու որոյ ի մասնակցութիւն կը հրաւիրէ Ս. Խաչատուրեան իւր բաղմամբ յաճախորդքն, ինչպէս նաև զամէն տառապեալս ատամնախօթութեամբ: Փորձը կրնայ ապացոյցանել թէ այս նոր եղանակաւ կարելի է ոչ միայն առանց ցաւի հանել ակռայն, այլ որ ոչ նուազ պիտանացու է, ելեկտրական զօրութեան ազդեցութեամբ առաւել եւս կը բարւոքի մնացեալ ակռաներուն առողջական վիճակն:

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

ԴԵՂ ԱՐԱՆ

**Պ. ԵՒ Հ. ՔԻՒՉԻԻՔԵԱՆ
ԵՂԲԱՐՑ**

Երկար ժամանակէ ի վեր՝ դեղալաճառութեան եւ դեղագործութեան զբաղելով հասարակութիւնը գոհացնելու համար մեր ձեռքէն եկած ջանքը խնայած չըլլալիս յայտնի է մեր պատուարժան յաճախորդաց և բոլոր հասարակութեան: Այս անգամ ալ, մեր յարգոյ յաճախորդաց դիւրութիւն մ'ըլլալու համար, դեղարան մը բանալ փափաքելով, շատ տարիներէ ի վեր ամենուն ծանօթ Պոլսոյ ԵՖէի-Ճամի փողոցի 26 թիւ մթերանոցէն զատ՝ նոյնպէս Կ. Պոլիս կամուրջին դիմացը 77 թիւ «Պ. եւ Հ. Քիւչիւքեան եղբարք» անուամբ դեղարան եւ մթերանոց (տէքօղիթօ) մ'ալ բացած եմք, ուր Ֆրանսայի եւ Յնդիոյ քիմիական բաղադրութիւններն ու զանազան դեղերը, մեծ խնամով չինուած, եւ ամենէն ընտիր տեսակները կը գտնուին: Ասոնցմէ զատ ամեն առեն դործածուած զանազան տեսակ գինի, աղիւ ձկան իւղ, Նօրվէկիոյ չօքօլա, քօնեաք եւ ուրիշ ըմպելիք միշտ կը գտնուին: Եկած դեղապիրք իսկոյն թարմ դեղերով, և մեծ խնամով կը պատրաստուին: Ասոնցմէ զատ դեղարանին վերնայարկը բժշկաց համար յատուկ տեղ որոշուած ըլլալով, հիւանդութեան մը համար բժշկի հետ խորհրդակցելու ուղղով անձինք, մեր դեղարանը գալով, ամեն կերպով օգուտ կը տեսնեն:

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

ՔԻՄԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ

ՁԱՓԱՌՈՐ ԳԻՆ

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33րդ ՏԱՐԻ

1884 ՕԳՈՍՏՈՍ 4

ԹԻԻ 3729

ՅԱՌԱԶԱԲԱՆ

ՄԱՍԻՍԻ ԸՆԹԵՑՈՂԱՅ

«Մասիս» ի 33րդ տարւոյ 3729րդ թիւը կը ներկայանայ ընթերցողաց հիմնովին տարբեր եղանակով քան իւր նախորդ 3728 թիւերն . տարբեր դիրքով , տարբեր պարունակութեամբ , տարբեր խմբագրութեամբ :

Մենք կարող չենք այժմ հիմնուել լոյ՛ «Մասիս» անցեալին վրայ , խօսիլ նորա ապագայի մասին , վասն զի այլ է օրաթերթ մը , այլ է չաբաթաթերթ մը : Անցելոյն մէջ «Մասիս» նշանաւոր դեր կատարեց իբր առաջին օրաթերթ Հայոց , այսուհետեւ իւր դերը ոչ նշանաւոր կարեւոր պիտի ըլլայ քան յանցեալը :

Պէտք չէ ենթադրել թէ չաբաթաթերթի մը ազդեցութիւնը այնքան զօրաւոր չը լինի որքան օրաթերթի մը ազդեցութիւնը : Եւրոպայի և Ամերիկայի մէջ չաբաթաթերթք , և նոյն իսկ ամսաթերթք , այնքան կարեւոր դիրք ունին որքան օրաթերթերն , և երբեմն ալ աւելի : Հանդէսներն աւելի նախապատուութիւն ընծայելով յօդուածներու քան լուրերու , կարող են հզօր ազդեցութիւն ունենալ հասարակաց կարծեաց վրայ :

«Մասիս» ի նոր խմբագրութիւնը ուշի ուշով ուսումնասիրած է այն ամէն պայմաններն որովք կարող պիտի

լինի օգտակար լինիլ այն ամէն շրջանակներուն յորս մուտ պիտի գտնէ : Ազգային և քաղաքական ընդարձակ տեսութիւններ , բանասիրական ամէն կարգի յօդուածներ յատուկ խնամոց զլխաւոր առարկայները պիտի լինին :

«Արեւելք» և «Մասիս» երկու հիմնարկութիւնք , յոյժերին միացուցած , մի և նոյն ուղղութեամբ , մի և նոյն վարչութեամբ , բայց ո՛չ մի և նոյն պարունակութեամբ , պիտի ծառայեն տարածել ազգին մէջ այն ամէն քաղաքականներն որք առողջ և փրկաւէտ համարուած են այդ թերթերու խմբագրութեանց կողմանէ :

Անկախութիւն բարոյական , անկախութիւն նիւթական կը կաղմեն «Մասիս» ի և «Արեւելք» ի գլխաւոր զօրութիւններն . յենած այդ զօրութեանց երկու թերթերու խմբագրութիւններն կարող են զգուշացնել ազգը չարամիտ բարեկամներէ , վնասակար խորհուրդներէ և մատնանիչ ընել այն ամէն թերութիւններն որք ի վաղուց անտիարգելք եղած են մեր բարոյական զարգացման :

«Մասիս» ի տնօրէնութիւնը հետամուտ պիտի լինի ամէն կերպիւ դուրս ընել իւր ընթերցողները : Խնամեալ խմբագրութեան մը հետ միասին թերթին ածան գինը , կանոնաւոր առաքումը պիտի պատճառեն այս գոհունակութիւնը :

«Մասիս» ի խմբագրութիւնն ապա-
հով է որ այն ընդունելութիւնը որուն
արժանացաւ «Արեւելք» նոյն ընդունե-
լութիւնը պիտի գտնէ նաեւ «Մասիս»
շաբաթաթերթը, այն «Մասիսն», որուն
անուն այնքան սիրելի եղած է ազգին :

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այլ եւս ընկերութիւնը
չի պիտի թողու զերնե-
բայարձակ առանձնու-
թիւն կամ հրապարակա-
յին կեանք ընտրելու հար-
կին մէջ :

ՇԱՌԼ ՏԸ ՌԷՄԻՋԱ

Այդ ինքիւններն խիստ
անթաքար կը վրդովեն
ժողովրդեան անդորու-
թիւնը : ՔԱՎՈՒՈՒ

Ահա խնդիր մը որ համալսարհական
կարեւորութիւն ունեցող իմաստասիրական
հետազոտութեանց օրակարգին մէջ թէպէտեւ
ի վաղուց նշանակուած է, սակայն չբո-
ղարու քաղաքակրթութիւնն զայն իւրացը-
նելով, ընտանեկան և ընկերական զարգաց-
ման ու մարդկային սպիւն էութեան երկու
բնական տարերաց միայն, այսինքն տկար
բայց գեղեցիկ սեռին վիճակն քարծրացնելու
պէտքն զգացած ու քարոզած է :

Խնդիր մը որ իւր բնութեամբն կենսա-
կան խիստ մեծ փոխադրութիւններով մարդ-
կային ազգին կենաց ընթացքը կը յեղա-
շարժէ, բնական է որ ծագած վայրկեանէն
մինչեւ ի հաստատութիւն իւր բարեփոխած
օրինաց կամ սովորութեանց, և ի մտացումն
նախնի բազմադարեւ աւանդութեանց, պի-
տի յուզէ, զորով հասարակաց գաղափարն :

Իւր մարդիկ որչափ անձնատէր ալ բլրային,
անհնար էր որ կարենային անտարբեր մնալ
այն օրինակ պարագայի մը մէջ. հետեւա-
բար խնդիրն միանգամ երեւան ելլելէն ետ-
քը, մեծամեծ վիճարանութեանց և ուժ-
գին բողբոջաց տեղի տուաւ : Ուստի լըը-
մտութեամբ կ'իմաստասիրեն զայն ամեն
ուրեք բաց ի Ֆրանսայէն, « Ուր իւրա-
գոյն կը գտնեն ծաղրելն » կըսէ Ֆրանսացի

հեղինակ մը : « Խնդիր մը ծաղրելն զայն
« լուծել ըսել է, և ծաղրն չսպաննեւր այն-
« չափ որչափ որ կը յուսացուի : Ամենայն օ-
« լինական վիճակի խնդիրն արժանի է այն
« վիճարանութեան, որ արդէն ինքնին յա-
« բուցած է : Եւ այս նոր հոսանքին գիմա-
« դրուելու համար նորա դէմ ըսածք չը յո-
« լիելու ելնեւ անհրաժեշտ է. այլ կանխա-
« զգուշութեամբ զայն ջրանցքի մը մէջ ամ-
« փոփելն խոհեմութիւն (1) » :

Այսպիսի խնդրոյ մը կարեւորութեան
ատմական երկարօրէն բացատրելու հարկն
չեմք տեսներ, որն որ իւր ձգտմամբն իսկ
կը հրապուրէ, կը հրաւիրէ զմեզ, եթէ ոչ
խորին քննադատութեանց, որ վիճարկա-
յից և աշխարհավարաց պաշտօնն է, գոնէ
մեր հետազոտութեանց առարկայ ընել. այն
գլխաւոր կերպարանքն որով կը ներկայանայ
ընդհանրութեան :

Ընդհանրապէս ազգաց ընթացքին մէջ
տեղի ունեցած զանազան դիպուածներն
իրենց ազդեցութիւնը ներգործած են կա-
նանց վիճակին վրայ : Եւ ինչպէս որ ժողո-
վրդեան մը բարքն ու սովորոյթը կը ներ-
գործեն իրենց ազդեցութիւնը ընկերական
օրինաց հաստատութեան մէջ, նոյնպէս և
իւր զգացմունքն ու գաղափարներն իւր
ժողին մէջ տեղի ունեցած մեծամեծ դիպ-
ուածոց ազդեցութեանը ենթակայ կ'ըլլան :
Ընկերական հաստատութեանց յեղաշարժման
հետ կարծես թէ ամենայն ինչ կերպարա-
նափոխ կ'ըլլայ : Մտքերն գործունէութեան
կամ անշարժութեան մըմ մը կ'ստանան.
գաղափարաց հետ գրագիտութիւնն ալ կը
բարեփոխի. և ո՛չ միայն ազգաց քաղաքա-
յին կամ ընկերային վիճակին վրայ կը տե-
նուի այդ ազդեցութիւնը, այլ բնական կան
յարկերուն մէջ անդամ կը մտնէ : Երջան-
կութեան և պարտուց դառնալարներն և
մինչեւ իսկ սրտի դրոշմ, գոնէ ուրաւատեւ
միջոցի մը համար, զիպաւածոց ամենազգոր
ազդեցութեամբն կը ճնշուին : Եւ այն ասան
կը հասկցուի թէ մարդկային բնաւորութիւ-
նը իւր ստատութեան յղացումն է :

Քիչ մը ետքը, իրաւ է որ մարդկային
սրտի յաւիտեականութիւնը կը բողբոջէ վա-
ղանցուկ նորածնութեանց դէմ որք թէ-

(1) Լէոն Տոմա :



պէտ ուշ կամ կանուխ կը սրբազրուին, սա-
կայն կան նաեւ անոնց մէջ այնպիսիք՝ որք
կը մնան : Փորձառութիւնը կը սորվեցնէ թէ
ժամանակին տարբերութեանը հետ խոր-
հուրդներն ալ կը փոխուին, և թէ այս օրի-
նակ փափուկ խնդրոց վրայ ամեն ատեն և
ամեն տեղ մի և նոյն ոճով չի կրնար խօս-
ուիլ :

Եթէ ներքին չէ ժիւլ Ֆալի տաղանդն,
ու պերճախօսութիւնը փոխ առնուլ, կա-
րենալ համոզելու համար, դոնէ կրնամք
զինքը ի վիպութիւն կոչել այս դատին մէջ :

« Աշխարհիս մէջ կանանց դերին վրայ-
խօսին, մեր ամենէն քաղցր և ամենէն զօ-
րաւոր յուզմանց պատմութիւնն ընել ըսել
է : Սրտերնուս արձագանդներն հաւաքել,
և մեր ընտանեկան կենաց մէջ դառնաւ-
ած ամենէն քաղցր, ամենէն զօրաւոր և եր-
բեմն ամենէն արմկայող գգացումներն իսկ-
լուսաւորել է : Համեմատել այս դերն կա-
ռավարութեան հետ . բարդատել հանրա-
կան կեանքը ընտանեկան կենաց հետ . ցոյց
տալ այն նուրբ խորհրդաւոր՝ բայց ան-
տարակուսելի հանդոյցը, որով կապեալ են
իրարու հետ, այնպիսի խնդրոյ մը դըպ-
չիլ է, որոյ քննութիւնը մեծահատոր դըր-
քի մը կը կարօտի : Գիրք մը որ ինքնին
խիստ հրապուրիչ պիտի ըլլայ մեզ համար,
վասն զի նորա իւրաքանչիւր էջին մէջ, պի-
տի վերստին գտնելը, մեր սրտէն փախած-
մի հառաչանք, աչքերնուս թափած՝ ար-
տասուաց կաթիլ մը, մեր ապագային վրայ
փայլող յուսոյ նշույլ մը, որ կ'առաջնորդէ
զմեզ այն տաղնապալից վայրկեաններուն
մէջ՝ յորմէ դժբաղդաբար և ո՛չ մէկ արա-
բած զերծ է այս աշխարհիս վրայ » :

Արդ՝ հեպաբորի ընթերցողաց յայտնի է
թէ՝ կանանց ազատագրութեան խնդիրը յա-
րակից է Մարդկային Իրաւանց յայտարարու-
թեան, որ 89 ի յեղափոխութեան անմահ
սկզբունքն է :

Այն օրէն, որ մարդիկ գերութեան բար-
ձումն, աւատապետութեան ջնջումն և օրի-
նաց առջև հաւասարութեան, միով բանիւ
քաղաքացիութեան իրաւունքն պահանջեցին,
կանանց ազատասիրութեան խնդիրն ինքնին
երևան ելաւ :

Նոր բան մը ըսած չի պիտի ըլլամք, եթէ
հաստատեմք, թէ ամեն ատեն և ամեն ազ-

գաց համար անուրանալի ճշմարտութիւն մի
է որ արանց առ իդական սեռն ունեցած
սկնածութեան և յարգանաց աստիճանն
հետզհետէ կը բարձրանայ, քանի որ ժողո-
վուրդք կը հեռանան նախնական բիրտ վի-
ճակէն :

« Ամենուրեք, կըսէ Պուռպուխ, պատ-
մութիւնը մեզի կը սովորեցնէ թէ բարուց
զարգացման հետ կնոջ մասնաւոր յատկու-
թիւններն աւելի դնահաստուած են : » Սա-
կայն ինչ հարկ պատմութեան վիպութեանը
դիմել, մինչդեռ ներկայ ժամանակին մէջ
կը տեսնեմք թէ քաղաքակրթութեան պո-
ղոտային վրայ կանգ առնող ժողովրդեան,
ըստ Դձէ Ժաէի կանայք բնութեան հակա-
ռակ կէս-գերութեան մէջ են : Մէկդ թող-
լով ուրեմն Ափրիկէի, Ամերիկայի և Աս-
տրալիոյ կանանց վիճակը, փնտնեմք միայն
հին և նոր աշխարհի քաղաքակրթ ժողո-
վրդեան մէջ, մարդկային ազգի կիսուն,
զեղեցիկ սեռին ընկերական վիճակին բար-
ւորման համար եղած ջանքերն :

Բազմաթիւ հեղինակներ այս խնդրոյ վը-
րայ դրած են, բայց շատերուն քարոզած
սկզբունքն համաձայն չէ կնոջ բնութեան :
Ոմանք իրաւանց և պարտուց բացարձակ հա-
ւասարութիւն կը պահանջեն . այլք այդ
իրաւունքն բոլորովին կուրանան :

Աւերոյդ և ճանճրացուցիչ կըլլայ յիշա-
տակել բոլոր այն մի իտիպայից, դիւանոց,
բանաստեղծներու և վիպասաններու անուն-
ներն որք իդական սեռին արականէն սոո-
րին տարած մը ըլլալն ապացուցանելու աշ-
խատած են : Մաքսի եկեղեցական ժողովոյ
Ս. Հայրերն մինչև իսկ կանանց հոգի ունե-
նալն ժխտեցին :

Փորձառութիւնն և ամենօրեայ դիտո-
ղութիւնն իսկ ապացուցանեն թէ՝ ամեն ատեն
և ամեն աղիւս մէջ, յառաջող իմութեան
իւրաքանչիւր քայլերն, արանց առ իդական
սեռն ցոյց տուած յարգանաց և սկնածու-
թեան աստիճանն բարձրացուցած են : Մի
և նոյն ազդեցութիւնն ունեցած է յառա-
ջող իմութիւնը զանազան դասուց և անձ-
նականութեանց նկատմամբ : « Իւրաքանչիւր
անհատի քաղաքակրթութեան աստիճանը
առ զեղեցիկ և տկար սեռն ունեցած մե-
ծարանքէն կը չափուի, » ըստ Պուխեթի :

Այսչափ նշանաւոր եղելութիւնք պէտք

էին բաւական ըլլալ, մեզի ցոյց տալու թէ՛ ինչ պիտի ըլլայ կանանց վիճակը ապագային մէջ, ինչպէս նաեւ ազգաց և անհատից վարմունքն որք քաղաքակրթի ախտոցուն կը պահանջեն :

Ստուգիւ օրինաւոր պատճառ մը ցոյց չի տրուիր այսօր, անձնական անկախութիւնն, օրինաց առջև հաւասարութեան սկզբունքն, մարդկային ազգի իդական սեռի վրայ ալ տարածելու գաղափարին դէմ, որով կանանց ազատագրութեան համբաւաւոր խնդիրն, որ տարօրինակ փրկումացութեամբ կը մեկնուի, իւր պարզ և բնական լուծումը կըրնայ գտնել :

Բայց ըստ Պուխնէրի, մտայ ծուլութիւնն և սովորութեանց ու նախապաշարմանց ազդեցութիւնն այնչափ զօրաւոր է արական սեռին վրայ, որոց չիրցան դիմակալել իրաւանց և խոհականութեան ամենէն պարզ և բնական պահանջումներն :

Ահա այս պատճառաւ է որ, « բաղմադարեան վիայութեանց » ինքնակոչ դրութիւնը, յոր կը յենուեն կանանց ազատագրութեան հակառակորդք կըցաւ յաջողիլ, ծանրակշիւ փաստի մը արտաքին երեւոյթն ստանձնելու :

Միթէ այդ բաղմադարեան խոկմունք, նուիրական և մարդկային ու Ստուածային իրաւանց համաձայն, եւ բնական օրինաց իբրեւ աննահանջելի պահանջումն չի յայտարարեցին դերութեան խնդիրն : Նոյն իսկ նախնի փիլիսոփայք եւ մեծահանձար խորհողներ չի կըցան ճողոպրել այս նախապաշարումն : մինչդեռ այսօր շատ դժուար պիտի ըլլայ գտնել մարդ մը, որ յանձն առնու իրաւանց եւ սկզբան համաձայն հրատարակել, այն հաստատութիւնն որ մարդկութեան ամօթալի մէկ արատն կը համարուի :

Ինչպէս դերութեան խնդրոյն, նոյնպէս եւ կանանց ազատագրութեան խնդրոյն մէջ պատմութեան եւ բնութեան կը դիմեն, տալացուցանելու համար : Ինչ, — թէ կանայք իրօք եւ ծնողեամբ հաւասար չեն արանց, եթէ հաւասար ըլլային, ինչպէս պիտի կըրնային ամեն ատեն արանց դէմ ստորին վիճակ մը հանդուրժել : Ինչպէս պիտի կարենային մարդկութեան հպատակ մասն կազմել, առանց ուժգնաբար մաքառելու

իրենց եղած զրկանաց դէմ : Պատճառն այն է թէ նոքա գիտեն որ բնութեան իրենց յատկացուցած դերն՝ խիստ տարբեր է արանց դերէն, որք մարմնային եւ մտային զօրութեամբ, դեր ի վերոյ են քան վկանայս : եւ թէ իրենց պաշտօնն է, միմիայն մարդկային ազգի սրտագրութիւնն եւ տնային կամ ընտանեկան խնամոց հսկողութիւնն :

Յայտնի է թէ, առ երեւոյթս որչափ հաճոյական կերեւնայ բնութեան եւ իւր օրինաց կոչումն ընել, այնպիսի սարագայի մէջ, մանաւանդ այնպիսի անձանց կողմանէ՝ որք զայն ի լրոյ միայն կը ճանչեն, քան թէ իրենց անձնական փորձառութեամբ, որով բնական օրինաց տրուած սխալ մեկնութիւններն իբրեւ անյաղթելի փաստ մը կարծելով, չեն ուղեր մինչեւ իսկ նկատողութեան առնել, նորա դէմ եղած ամենէն լուրջ առարկութիւններն, և կը ծաղրեն :

« Պէտք է որ մարդ մը իւր սեռին խենթն ըլլայ, վայրկեան մը հաւատալու համար թէ, վինքն յղացող եւ արեամբք սնուցանող էտիլը մայրը իրմէն ստորին ըլլայ : Ոչ, հազար անգամ ոչ, այր և կին մի և նոյն բանաւոր է՝ ահիւ երկու երեաներն են, և այս նկատմամբ բոլորովին հաւասար :

« Բայց այլ է հաւասարութիւն այլ է նըմանութիւն : Կին մը երբէք նման չէ սուն, բայց իւր գործադրած պարտքերովն նորա հաւասարն է : Այս բնական հակապատկերէն կը ծնին ներդաշնակութիւն, միութիւն և սէր :

« Կնոջ բոլոր կարծեցեալ ստորութիւններն իրեն փառք են, և արանց ընկերական առանձնաշնորհունք կաներեւութանս առաքինութեան մեծութեանն առջեւ որ կնոջ սեպհականութիւնն է » :

Այլքս Վէյլի սոյն գեղեցիկ տողերուն վրայ, եթէ աւելցնեմք, մարդկային ազգի ընկերական վիճակին, բարոյական անդամաղնութիւնն ընող ամենէն ճարտար հետալօտչին՝ Պաղաքի հետեւեալ խօսքերն .

« Կինն հաւասար է սուն, երբ իւր կեանքն անձնութեան յաւիտեական ողջակէզ մը կ'ընէ, ինչպէս որ արանց կեանքն յաւիտեական գործունէութիւն մի է » : Արական և իգական սեռերու բարոյական հաւասարութեան աւելի համոզիչ փաստ մը փնտռելու պէտք չեմք ունենար,

Արդ այն անձանց որք բնութիւնն և պատմութիւնն կուզեն խեղճութիւնը և ըստ հաճոյից իւրեանց և քմաց մեկնել կանանց ազատագրութեան խնդիրը, կանխաւ կը յայտարարենք թէ ինչպէս ընդդիմախօսաց, նոյնպէս ալ ի նպատակ ազատագրութեան, չատ մը ինքնակոչ արեւմտեաններու ծայրայեղ տեսութիւններն և անդործադրելի առաջարկութիւններն հաւասարապէս դատաւարտելի են :

«Մեք արքս, կըսէ Ռատէնհաուզէն, պէտք է որ համոզուինք և վարժուինք նկատել զկանայս, ոչ թէ իբրեւ մեր հաճոյից կամ զըւարճութեան մի տարրն, այլ իբրեւ մեր հաւասարն : »

Իսկ այս հաւասարութիւնն ի՞նչ կերպիւ պէտք է ըմբռնել, կամ լաւ եւս կըմբռնեն, կանանց ազատագրութեան պաշտպան իմաստասիրէք եւ աշխարհավարք : Ահա հոս է խնդիրը : — Բարոյական հաւասարութիւնն առանց զարտուղութեան յայտարարելէ ետեւ, ազատագրութեան խնդիրն երկու գլխաւոր կերպարանօք կը ներկայացնեն, որոց մին քաղաքային իրաւունք (բարոյական) եւ միւսն քաղաքական իրաւունք (քաղաքական) կը կոչեն :

ԵՅԳՐԱՆ ԵՈՒՆՈՅԵԱՆ

ԵՐԱՐԻ ՄԷ ՊԻՆԷ

Ա.

Ո՛վ Վոսփորի իմ անոյշ,
Վարդենեացդ ի թուփ
Ի՞նչ արորժ գեղգեղեն
Անողգն ու պըլպուլք :

Ամբան աղւոր կիրակի երեկոյ մ'էր, մին մողական այն երեկոյներէն զոր կ'ընծայէ Վոսփոր : Քանի մը նաւակներ մեղմիկ մեղմիկ կը սահէին հեղատահ առուակին վրայ որ ծածկուած է Վոսփորի խորհրդէն միոյն մէջ :

— Եօռիկ', կամայց կտոնց, կ'ըսէր խառտեալ պատանի մը իւր նաւավարին :

Նաւավարը քմծիծաղ մ'ունեցաւ, հասկընալով թէ՛ պէտք չէր անցնիլ այն մակոյկին որ իրենց առաջէն կ'ընթանար :

Հարկ չենք տեսներ դիմել մանուածա-

ղատ դարձուածքներու որպէս զի իմացընենք թէ՛ այդ մակոյկին մէջ աղջիկ մը կար : Հրանտ, խառտեալ պատանին, այն զմայլական դրից մէջ էր՝ յորում կը գտնուին ծերերն և զայրոցէն նոր ելած պատանիներն, երբ կը բռնուին սիրահարութեան տենչէ կամ ախտէ, — ինչպէս որ կ'ուզէք : Բայց մակոյկի աղջիկը, ուրախ զուարթ, մտքէն իսկ չէր անցնէր սրտաշարժ դրից մէջ գըտնուիլ և շնորհիւ այս անտարբերութեան իւր ազդեցութիւնը մեծ եղաւ Հրանտի վրայ : Անշուշտ շատերնիս դիտած ենք թէ՛ աղջիկներն ո՛րքան նուազ զգեստն արտասուածով որ ունենիներու կերպարանք, ա՛յնքան աւելի ազդեցութիւն կ'ունենան տկար սեռին — այսինքն մեր խեղճ սեռին — վրայ :

Հրանտ մեղաւոր չէր այդքան զգածուած լինելուն . բնութիւնն ալ հրաւէր կը կարդար սրտերու՝ մի քիչ բանաստեղծական տրոփիւններ ունենալ : Պնայազարեալ էր Կէօք-Սուլի անոյշ մեղմաղճութեամբ, մեղմաղճութիւն վերջալուսոյ որ կը ցոլացնէ սրտի մինչեւ խորերը, կենաց երազներու և պատրանաց հրապոյրներն : Մակոյկի մը մէջէն կը լսուէին երգեր : Քաղցր ու դաշնաւաւոր ձայն մը կ'երգէր

Յեթեր անդ կապուտակ,
Եւ ի Վոսփորին,
Մեղմահոս պլպլան
Խոպոպը լուսնեկին :

այն անոյշ երգը որ կը բուրէ գեղ, սէր, երիտասարդութիւն :

Օրօրուելով ալեաց միմունջէն, Հայ-Խտալական նուաղէն, թափեցան մակոյկներն ու նաւակներն ի Վոսփոր, և հերձելով հոսանքներն ցան ու ցիր ախուցան ամէն կողմ :

Մակոյկն, ուր կը գտնուէր աղջիկն, կ'ուզէր զէպ ի Նէնի-գիւղ : Աւելորդ է ըսել որ Հրանտի նաւակն հեռուէն կը հետեւէր նմա : Սակայն աշխարհիս վրայ ամէն ինչ սպառուած մ'ունի : Աղջկան մակոյկի նաւավարներն ձգեցին իրենց թեւծակներն Նէնի-գիւղ եւ Եւսի մ'առաջ, և նաւակի բնակիչներն թեթեւ, զուարթ — ինչպէս պէտք է լինին Վոսփորի վրայ նաւարկողներու ցատկեցին : Հրանտ կը դիտէր . դիտէր թէ՛ անողքելի ճակատագիրն որոշած էր իրեն համար « Անդ կացցես և զըյս մի՛

տեսցես» : Նաւակը ետ դարձաւ և սրացաւ դէպ ի Ստորին-Վոսիոր : Հրանտի սիրտը գրաւուած էր այն տխրութեամբ՝ որոյ վըրայ այնքան կը գուրդուրան բանաստեղծը :

Բ.

Ֆրանսերէնէ թարգմանուած վէպերը շատ կանուխէն կուսուցանեն դպրոցի մեր տղայոց, կեանքը քաղցր ընծայելու եւ դառնացնելու միջոցներն : Այդ վէպերէն ուսած էր Հրանտ թէ՛ երիտասարդութեան կրնայ յաջորդել ծերութիւնը եւ թէ՛ կենաց — ինչպէս կ'ըսեն — « գարնան » օրագիր մը այնքան ակորժելի է այդ ցուրտ օրերն որպէս ծաղիկ մը արհալանուած քերականոցի մէջ : Երեք տարիներէ ի վեր յորմէ հետէ Հրանտ ելած էր դպրոցէն, օրը օրին թուղթի վրայ կը նետէր իւր տպաւորութիւններն : Իցէ՛ թէ Հայ վիպասան մը երթար փնտռէր այդ տեսակ յիշատակարաններն, գրուած ուրախութեան ու պատրանաց արցունքներով, վրայը նոր սերունդի սրտի առաջին բարախմանց : Այդ կենդանի յիշատակարաններու բեկորներովն պարգեւէր մեղ վէպ մը, կենդանութիւն բուրոյ վէպ մը, ուր նայէինք թէ նոր սերունդը որպիսի եռանդով, ինչքան հաւատքով կը թեւակոխէ կենաց ասպարէզն, հաւատալով թէ՛ իւրն է ասպդայն . եւ օր մը, որ շատ չուշանար, կը տեսնէ թէ՛ մուխն ու ծուխը կը բարձրանան իւր յոյսերու փլատակներու վրայէն :

Հրանտի յիշատակարանի մի քանի թերթերն զոր տեսանք այս մտածութիւնը ազդեցին մեզ : Առ այժմ այդ յիշատակարանէն քաղենք մի քանի տողեր :

« Յունիս 15. — Երեք տարիներէ հետէ դործի եմ . առաջին անգամն է որ բշ . առաւօտ մը աչքերս բացի . ուրախ զուարթ : Օղը զով էր եւ քեզեցիկ . զեղեցիկ օդ մը միշտ ուրախութեան տպաւորութիւններ կը թողու . բայց երկու տարիներէ ի վեր են շատ տեսած էի գարնան առաւօտներ, սաւայն այդ ամէն առաւօտներու արեւը չունէր ինձ համար ո՛ր եւ է քաղցրութիւն : Ինչո՞ւ կ'ապրիմ կը հարցնէի ինքնին : — Ապարիմ որպէս զի նեղ խուցի մը մէջ, ամբողջ մը վրայ դամնուած — մնամ ամէն օր : — Ինչո՞ւ

սիրտ մը ունենալ, ինչո՞ւ երիտասարդ լինիլ : — Սակայն այս առաւօտ մինչեւ իսկ մեր խանի բեռնակիրն զգաց թէ վրաս փոփոխութիւն մը կայ : « Եւր ըլլայ, ծաղաւ Հրանտ, կ'ըսէր, ինչ ունիս այս առաւօտ » — Բարի՛ Վարօ, ինչպէ՞ս կրնաս դիտնալ թէ՛ երէկ քիչեր է ի վեր կեանքս նպատակ մը ունի : Երէկ քիչեր է ի վեր դէմք մը աչքերուս առաջն է : Շատ անոյշ է հիմա կեանքս, կարծես ամեն ոք սիրել կուզեմ, նոյն իսկ չար պաճի : Այլեւս բեռ մը չէ ինձ օրուան տասը ժամերու աշխատանքն . այդ տասը ժամերն ինչպէս չուտ անցան այսօր, պէտք է աշխատիմ անով միայն ուրիշ կրնամ նըպատակիս հասնիլ, եւ պիտի հասնիմ : Բայց հինգ օր կը բաժնեն զիս կիրակիէս : Հինգ օր դեռ որպէս զի հնար լինի ինձ թուիլ Ենի-գիւղ »

Գ.

ՍՈՑԻ ԱՌ ԵՄԱՆԻԿ

Ենի-գիւղ, 81 Յունիս 21

Սիրելի Երանիկ .

Մէկ ու կէս ամիս է գրեթէ Ենի-գիւղ ենք և քեզմէ լուր չունինք : Չեմ գիտեր թէ ինչպէս ժամանակ կանցնես Բոսթիի ձգլանորսներուդ հետ : Մենք բաւական լաւ ժամանակ կանցնենք և դժգոհ չեմ : Սենեակս պարտիզին վրայ է . թռչուններու դայլայլիկը կ'արթնցնէ զիս առաւօտները : Նախաճաշիկին կընենք դալարիներու վրայ, ծառերու շուքին ներքեւ :

Սակայն դու ալ ինձ պէս գիտես թէ՛ տասն և եօթը տարեկան աղջկան մը համար արեւու ճառագայթներն և թռչնոց դայլայլիկներն միայն, սրտնեղութիւն կը պատճառեն : Մեր սրտէն բան մը կ'զգանք զոր բացատրել չենք կարող :

Դրացիներ ունինք, չեմ գիտեր Պօլսոյ օր կ'օրմէն եկած են (կ'ըսեն թէ կինները հետաքրքրութեան անձնաւորութիւնն են, բայց ահա մեր դրացիներուն ո՞ր տեղացի լինելն իսկ չեմ գիտեր) : Ուսկից ալ եկած լինինիս, Խանսալ կը հոտին : Հօրս լաւ բարեկամներ են և թուղթի ընկերակիցներն : Երեք եղբայրներ են . միջակը Յակոբիկ աղան, որ միշտ իբր պատուանշանի մը չքաղարդը

կուրծքին վրայ կը կրէ ժամացոյցին ոսկի շղթայն կը կարծէ թէ ոչ ոք իւր հրապոյ-
րին առաջ կրնայ դիմանալ, և առիթ չի ախ-
ցրնէր ինձ Կոմիտէի ընկեր, որք քիչ շատ
պաղուկ են: Ար հետեւցնեմ թէ, իմ սի-
րովս կը տոչորի, և հայրս ալ գէշ աջօք չը
նայիր: Երիտասարդ է, կամ որ լաւագոյն
է, հարուստ է, ահա ինչ որ հօրս պէտք է:
Ստոյգը չեմ գիտեր թէ արդեօք մենք ալ
այսքանով դո՛ւ չե՞նք լինիր:

Սակայն, Երանիկ, բաղդս բաց է, մի
խնդար ըսելիքիս վրայ: Միտահարներ կը տե-
ղան գիւղուս, եթէ կուգես քեզ ալ խրկեմ:
Ահա, չորս հինգ կիրակի է խարտեալ երի-
տասարդ մը անվրէպ ամէն առաւօտ առա-
ջին շոգենաւով Ենի-գիւղ կեկէ: Շոգենա-
ւուն մէջէն փոքրիկ դիտակով մը շարունակ
մեր պատուհանը կը նայի, ձեւացնելով թէ
չորս կողմը կը դիտէ: Շոգենաւէն կեկէ և
նաւամատոյցը կը նստի. երբ դուրս ելլենք
քիչ մը վերջը մեր ետեւէն է: Շատ զգոյշ է,
և հայրս ոչինչ կիմանայ, սակայն Յակոբիկ
աղան բաւական վարպետ է, ամուսինէ ա-
ւելի կասկածոտ: Այդ երիտասարդին եկած
կիրակիներս Աջօք-Սուլի հանդիպեցայ:

Շիտակը ըսեմ, հարիւր Յակոբիկ աղայի
չեմ փոխեր: Աղւորիկ է, սիրուն է, դեղին
է, և գիտես թէ ես սեւ մազեր ունենա-
լովս խարտեալներն կը սիրեմ. վրան գլուխը
լաւ, մաքուր և վերջին նորաձեւութեամբ:
Վրան ազնուականի բոյր մը կայ: Մի քիչ
իւր շարժմանց մէջ անվարժ է, բայց միթէ
այդ ալ չծառայէր անձնասիրութիւնս գո-
հացներու. ո՛չ ասպաքէն ճշմարիտ սիրահար-
ներն քիչ մը ապուշի կը նմանին: Թէ լաւ
համուղւած լինէի անոր վիճակին վրայ, ի-
րաւցնէ չէի վարանէր, բայց Պիտի ըսես
թէ որչափ դրական եղած եմ, սակայն քեզ
ալ կը ձանձնամ, քեզ ալ: Շրջագոգեստի մը
յարգը դու ինձմէ աւելի գիտես:

Մնաս բարով, սիրելի Երանիկ, նամակս
պատուէ, թէ որ ագեղ սեռէն մէկուն ձեռ-
քն ինչայ վայ մեզ. կ'սպասեմ նամակիդ՝
համբուրելով զքեզ:

Քոյդ

Սօֆի

Դ.

ԵՐԱՆԻԿ ԱՌ ՍՈՖԻ

Երթի, 4 Օգոստոս

Միտելի Սօֆի

Վտանդի մէջ ես, մեր դպրոցի հերե-
տիկոսը պիտի լինիս: Որպիսի՞ յուզմամբ սրտի
կը խօսիս խարտեալ երիտասարդիդ համար.
որպիսի՞ հեղեղութիւն ունիս հարուստ սի-
րահարիդ: Իմ կարծիքս գիտես, իմ հա-
ւատքս գիտես. այն ամուսինն է լաւա-
գոյնը որ ամենէն աւելի ճոխ շրջագոգեստ մը
կարող է տալ. այս է, և այս պէտք է լինի,
մեր իտէպը: Բայց դու կամաց կամաց կ'ըս-
կըսիս մոռնալ մեր դպրոցի աւանդութիւն-
ներն: Այնպէս դուրգուրանք մը կը տածես
խարտեալ երիտասարդիդ համար իբր. թէ
ծեր աղջիկ մը եղած լինէիր: Այո՛, քեզ
պէտք է քերովքէ մը, ինչպէս կը նկարեն
պատկերհանք, և որոյ, ինչպէս կ'ըսեն բա-
նաստեղծք, ոսկեթոյր մաղերն խառնուին
խոպոպիկներուդ: Այո՛, Երանիկ, հետեւէ
պատկերհաններու և բանաստեղծներու,
ու օր մը եկուր բանտուէ՛ Բրօքէ:

Ծիծաղա չկրցի բռնել քու աշխատանքիդ
վրայ, որ միայն կիրակի օրերը կրնայ գալ
իւր սրտին գանձերը քեզ բանալու: Ո՞վ գի-
տէ քանի՞ օր անօթի կը մնայ շոգենաւին
ստակը պատրաստելու համար: Ի՛նչ և է,
բարեմաղթութիւններս կ'ընեմ: Մանօն-
Լէսքոյի երկրորդ տիպը կը լինիք: Ուրիշ ա-
տեն երկար կը դընմ, առ այժմ սիրալիր բա-
րեւներս և համբոյրներս:

Քոյդ

Երանիկ

Յ. Գ: Ար դարմանամ թէ ինչո՞ւ այսքան
կը հակառակիմ խարտեալ քերովքէիդ, լաւ
չըլլար որ դայն քեզ պահես, և խանութ նս-
տող Յակոբիկ աղադ ալ բարեկամուհեղդ:

Ե.

Ե.

Խաչէն վերջ, աշնան առջի հովերուն
հետ Սօֆիի հայրը ալ չուզեց Ենի-գիւղ
նստիլ, գործը չէր ներեր երկար ատեն չո-
գենաւներու մէջ կենալ, ուստի դարձեալ
Բերա եկաւ: Երանիկ ամբողջ ձմեռը Բոս-
թի պիտի անցնէր, մօրը հիւանդութեան

պատճառաւ : Հրանտ կը շարունակէր չարա-
չար աշխատիլ : Գիշերներու մեծ մասը կը
զոհէր մի քանի լեզուներ սովորիլ . սէրն ու
ոյսը կը դիւրացնեն ամէն աշխատանք :
Հրանտ մեծ յոյսեր ունէր թէ՛ շնորհիւ իւր
նորանոր աշխատութեանց պիտի կարենար
լաւագոյն դործի մը ձեռնարկել, միակ մի-
ջոց իւր կէտ նպատակին հասնելու : Սա-
կայն այս չարաչար աշխատութիւնը, սրտին
յուզումը, դրամական անձկութիւնը, հոգե-
րն ամէն միացած էին բաւական խանդա-
րելու իւր առողջութիւնը որ արդէն շատ
փախուկ էր :

Այս միջոցին էր որ, սեպտ. 23 ի ուր-
բաթ դիւերն, Հրանտի չըբաժնէն Գէորգ
աղայ ըստ սովորութեան փոքրիկ երեկոյթ
մը կազմակերպեց իւր տօնախմբութեան
առթիւ : Հրանտ, որ չէր ուզեր զիշեր մը
խակ կորսնցնել, պարտաւոր էր ներկայ գտ-
նուիլ իւր մեծին տօնախմբութեան տարե-
դարձին, մանաւաղ որ երեկոյթին առթիւ
հիւրամեծարի պաշտօն արուած էր իրեն :

Երեկոյթը, որ եղանակի առաջին երե-
կոյթն էր, շատ գեղեցիկ ըլլալ կը խոստա-
նար : Գիշերուան չորսին արդէն բաւական
հոծ բազմութիւն մը գրաւած էր Գէորգ
աղայի սրահներն, որք ի Բերա լաւ համբաւ
ունէին :

Հրանտ սանդուղներէն վար իջած էր,
պաշտօնակցաց հետ միասին, ընդ առաջ
զնալ նոր հիւրերու, երբ յանկած սկսաւ
ստորոջ մարմնովը դողալ . գունաթափ ե-
ղած կուզէր սիւնի մը կռթնիլ :

Մարդ կային կենաց մէջ կան այնպիսի
վայրկեաններ յորում կարծես կը մոռնանք
ամէն իրականութիւն, և սրտերն իս լեցուած
յանկարծական ուրախութեամբ, կ'ունենանք
այն տպաւորութիւններն ինչ որ պէտք էր
ունենայինք եթէ խորին վատի մը ազդեցու-
թեան ներքեւ գտնուէինք : Կարծես թէ խըտ-
րութիւն մը չկայ յուզման մէջ, թէ նա ինի
ուրախութեան, թէ նա լինի տրտմութեան
յուզում : Սօփի կռթնած իւր հօրը թեւին,
չքեղ հագուած, ներս կը մտնէր : Այն դէմ-
քերէն մին էր Սօփիի դէմքը որոյ միայ
արուեստը դիւրակամ տպաւորութիւն մը կը
դրօշմէ : Սօփի ինքն ալ շուրջ ինչ այլազո-
նեցաւ, և անդ գտնուող իրեն ծանօթ հիւ-
րամեծարներէն միոյն թեւը մտնելով սան-

դուղներէ վեր ելաւ : Հրանտ կամաց կամաց
ետեւէն կերթար : Խեղճ տղեկին սիրտը
կտոր կտոր եղաւ, երբ կը տեսնէր իւր ան-
ծանօթ նախանձորդը, Յակոբիկ աղան, ուրախ
զուարթ խօսակցութեան մէջ Սօփիի հետ :
Ինչ որ ալ լինին փոխադարձ զգացումներն
գիւղապետացութեան մէջ դրացիք քաղցր բա-
րեկամութեան և ընտանեկան կապերով
կապուած կը մնան : Յակոբիկ աղա այդ ըն-
տանութեան և այդ բարեկամութեան եղա-
նակաւ կը խօսէր Սօփիի հետ : Հրանտ միշտ
նոցա բոլորը ժուռ կուզար : Պարերը միմիանց
կը յաջորդէին, ամէն շէք երիտասարդներն
կը կաքուէին Սօփիի հետ : Պարահանդէսին
ամէն մէկ մասը լմնաղուն Հրանտ միտքը
կը դնէր հանգստեան միջոցին կերպ մը
դտնել Սօփիի ներկայանալու : Բայց ամէն
մէկ անգամուն յաջորդին կը թողար : Եր-
կիւղալից և վարանոտ սէրը կարծես թէ ահ
մը կազդէր իրեն : Յակոբիկ աղան որ թէպէտ
չարչք մեծցած բայց և այնպէս սիրոյ խըն-
դիրներու մէջ հոտառութիւն ունէր, վա-
ղուց գիտէր թէ Հրանտ իրեն դէմ մըր-
ցող հակառակորդ մ'էր : Ար կարծէր թէ՛
դառն հեղնութիւն մը անօդուտ չէր լինէր :
Վալէ մը վերջ, զոր դարձած էր Սօփիի
հետ, նկատեց թէ Հրանտ վերստին կը դե-
գերէր իրենց չորս կողմը, խօսակցութեան
մը բռնուած, իւր չըբաժնէն ոչինչ հեռու,
Յակոբիկ աղա Թրքերէն լեզուաւ բան մը
խնդրեց Հրանտի չըբաժնէն, և այս վեր-
ջինս, Պարոն Հրանտ կանչելով, անոր ըսաւ
հոգալ այդ պէտքը :

Պարոն Հրանտ, ամական մը որ որչափ հա-
յացած լինի տակաւին դէշ կը հնչէ մեր աղ-
նական լսելեաց : Ո՛վ պիտի կրնայ պատմել
« Պարոն » ամականի սոցա՛ծ զայրոյթներն,
պատճառած վշտերն նոյն խակ անոնց որք կը
դանձան ռամկավարական լինել : Աւերորդ է
ըսել որ « իւր քէրովքէն » Պարոն լսել Սօփիի
անձնասիրութեան վերք մ'էր : Որոշ չէ խո-
ցուիր թէ կոնջ մը սէրը քանի տեսակ տա-
րերքներէ կը բաղկանայ, սակայն մինչեւ
ցարդ սրտի տարրալոյծներն դտած են թէ՛
փառասիրութիւնը ամենամեծ քանակու-
թեամբ խառնուած է այն բազմակնձիւն
բազալ լսութեան մէջ զոր կանայք սէր կան-
ւանուանեն :

Երբ Հրանտ իրեն արուած պատուէրը

կատարելով բարկութեամբ վերադարձաւ իւր առաջին տեղն, թէպէտ չէր ուզեր վերադառնալ բայց զօրութիւն մը զինքն անդ կը քշէր, լսեց թէ խօսքն իւր վրայ է :

— Ո՞վ է այս տղան, կը հարցնէր Սօֆի անտարբեր կերպով :

— Գէորգ է ֆէշտիի զրադիւններէն մին է, պատասխանեց Յակոբիկ աղա :

Իբր մահուան զօղանք հնչեցին Հրանտի լսելեաց Յակոբիկ աղայի և Սօֆիի խօսքերն, և երբ սկսան դեգերիլ վերստին պարողաց շուրջը՝ Սօֆի կ'ըսէր Յակոբիկ աղայի

— Քիչ մը ճեմենք :

Եւ առանց ակնարկ մ'իսկ տալու խեղճ պատանւոյն թեւ թեւի մտած հեռացան :

Հեռացա՞ն, և ամէն ոսկեգոյն երազներ աներեւութացան Հրանտի աչքերէն :

Մաղրը թրթուռ մ'է, որ զերդ աչնան գօս տերեւներ կը դարձնէ, մի քանի ժամէրու մէջ, սիրոյ նորածիլ կանաչ տերեւներն : Երանիկի խօսքերն ցուրտ կերպարանօք կը ներկայանային Սօֆիի աչքերուն, պարտի մը, պարզ, ոչինչ գրագրի մը կին լինիլ, այդ իւր երեւակայութեան մէջ չէր կրնար սղմիլ : « Մանօն-Լէսքօ » ահա՛ ահաբալի բացատրութիւնը : Երբ ծաղրը կը հսկէ արթուն, առ ի՞նչ օգուտ գեղ, երիտասարդութիւն, սիրտ : Սօֆի միշտ Յակոբիկ աղայի թեւն էր :

Հրանտ ապշած դաժուած էր իւր տեղը, ոչինչ կը լսէր, ոչինչ կը տեսնէր, մտածել իսկ կարող չէր : Մնաք բարով, յոյս, սէր, եռանդ. ածական մը բաւական եղաւ կեանք մը կերպարանափոխ ընելու : Հրանտ կարող չէր այլ եւս կենալ և հեռացաւ :

Լոյսը նոր սկսած էր ճեղքուիլ, տակաւին Բերա խոր լուսութեամբ կը նիւրհէր : Հրանտի դուռը կրակի մէջ էր. կամաց կամաց քայլելով կ'ուղղէր գնացքն ի Բանկալի. օդը շատ ցուրտ, և խեղճ տղան կը թողար : Արդէն արիւն քրտինքի մէջ էր երբ դուրս կ'ընէր սրահէն, և յուզման մէջ մոռցաւ քառասուն իսկ առնել : Երբ տուն մտաւ ցուրտը մինչեւ ոսկրներն թափանցած էր. ինկաւ անկողին և հազիւ կրցաւ մի քիչ մրախել :

2.

Ո՞վ կը կարծէ, կըսէր բանաստեղծ մը, թէ՛ մի քանի ողորդներ ճգնուելով կրնան արտադրել ջուր մը որ սա՛հ մը մարդուս երջանկութիւն կը պարգեւէ, վայրկեան մը մոռցնել տալով վիշտը : Այդ գերագոյն դարմանին կը դիմէր Հրանտ, երբ յուսաբեկ դուռը կախ Սեպտ. 28 ի շաբաթ երեկոյին կը վերադառնար իւր աշխատութեան տեղէն : Ամբողջ օրը շուարած անցուցած էր, եթէ ունէր սիրտանք մը այն ալ Գէորգ աղայի բացակայութիւնն էր, վասն զի մինչեւ առաւօտ անքուն մնացած լինելով կարող չէր եղած գալ : Յամբաքայլ Հրանտ անցաւ Ղալաթիա : Կամուջին աջ կողմը առաջին փողոցը շարուած կը մնան այն զինեւ տուններն զորս մենք քաղցր հնչելով կը կոչենք սրճարան : Անդ խոնուած են նաւաստին, ֆէֆալօնեացին, նաւապետը, քսակահատը, ցորենի վաճառականը, ամէնքն Յոյն : Պատուհաններն դուրսը լինելով ծածկուած են, վասն զի սիրտի մուկը պատած է ամէն կողմ. Հրանտ ներս մտաւ այդ զինեւ տուններէն միոյն մէջ, ապահով էր թէ ծանօթ դէմքի մը չի հանդիպիր եւ լուսութեան մէջ ինքզինքն իւր խոհերուն կուտայ : Գնաց ինկաւ անկիւն մը, եւ հոյն սպասաւորին հրամայեց, այնքան լրջութեամբ ինչպէս հարկւրապետ մը իւր գնդին,

— Էս ծառի :

Քանի մը վայրկեան վերջ օղիի սրուակներն կը յաջորդէին միմեանց :

Խեղճ Հրանտ, կրնայի՞ր երկու օր առաջ երեւակայել սիրուն յոյսերուդ մէջ, երբ գեղածիծաղ ասպադան կը ժպտէր քեզ, թէ երկու օր վերջը այդ յոյսերդ սրուակի մը վրայ պիտի կեդրոնանան, գեղածիծաղ ասպադան միայն անձանօթ դէմքերն պիտի համարիս : « Զ. Ա. կեանք, Զ. Ա. սէր : »

Մուկը աղէկ մը կոխած էր, խանութներ կը պարսպուէին. առկայծ լոյսերն կը պլալաւին Ղալաթիա. մանրացնող անձրեւ մը կիջնէր : Հրանտ վճարեց և դուրս ելաւ, չէր կարող ոտքի կենալ. տունը կը դառնային իւր շուրջը : Ոչինչ քովը մնացեր էր ստակ, կառք մը չէր կարող վարձել : Մերթ կանգ առնով, մերթ գլուխը պատին տալով, երերալով տատանալով կ'երթար ու կ'երթար, անհատնում ճանապարհ : Անձրեւը մինչեւ

ոսկրներն . կը թափանցէր. երկու ժամ վերջ երբ սուսն հասաւ խեղճ մայրն ու տնակիցներն սրտաթողի մէջ էին : Հանուեցուցին գինքն , մայրը լալով , և դրին անկողին :

Քնացի՛ր , խեղճ Հրանտս , քնացի՛ր , երջանկութեանդ վերջին բոսկէն է . վշտաբեկ ես , բայց դեռ կարող գինովնալ և քնանալ . ի՞նչպէս պիտի ծագի վաղն արեւը , ի՞նչ վիճակի մէջ պիտի գտնէ գքեդ :

Ծագեցաւ շատ պայծառ այդ արեւը , բայց Հրանտ կարող չէր անկողնէն դուրս ելնել : Հիւանդ էր , բայց չէր կրնար բժիշկ մը իսկ բերել :

Ի.

Իրիկուան դէմ է . աշունը մի քանի օրէն կը վերջանայ . օդը մեղմ է . թեթեւ հով մը կայ : Այնչափ ծառերու դալկահար տերեւներն . դեղին է ամէն ուրեք . դեղնած արեւմուտքը , դեղնած ծառերը , դեղնած բլուրներն , և հովը , կը տանի , կը բերէ , պատուհաններու կը զարնէ դեղնած տերեւներն : Ամբողջ Բերա դրօսանք կը վայելէ : Ալեւմակ մը ոտքերուն վրայ , մուշտակ մը հագած , գլուխը բարձի մը դրած պատուհանէն կը նայի Հրանտ : Փոս եղած են գանկոսկրներն , շատ նրբացած , շատ բարակցած մատներն . դէմքը բոլորովին դեղնած . միայն երկու այտերուն վրայ կարմրութիւն կայ . կը հազայ , կը հազայ : Կոմէն է մայրը , խեղճ մայրը , և դրացի երկու ծերունի բարի կիներ . օրուան լուրերու վրայ կը խօսին : Չկայ սիրտ մը որ կտոր կտոր չլինէր մօրը նայուածքէն երբեմն զաւկին ձեռքերէն կը բռնէր , վերմակին մէկ ծայրը վրան կուտար , հազար գուրգուրանքներ հազիւ ժպիտ մը կը նշմարուի Հրանտի երեսի վրայ ի սէր մօրն : Կեանքի ամենէ յուսահատ վայրկենի մէջ մխիթարանաց կարօտ է սիրտ մը , և մօրը սէրը միայն գերադույն դարման էր Հրանտի ցաւոյ :

Ի՞նչ յիշատիներ չէին պաշարէր Հրանտի խեղճ մօրը սիրտը : Աչքին առաջ կուգար այն կիրակին , յուլիսի այն տաք կիրակին , երբ կը վերադառնար պարգեւաբաշխութեան հանդիսէն , Հրանտը քովիկէն :

Հէ՛գ կինը , դեռ երէկուան պէս կը յիշր տասն և ութը տարիներու վշտերն ու

ուրախութիւններն : Աչքին առաջ կուգար երէկուան պէս տասն և ութը տարի առաջ խաչվերացի շաբաթ իրիկունը : Հրանտ դեռ մէկ տարուան էր : Ինքն տունը սրբած , մաքրած կը պատրաստէր Նաւակատիքի իրիկուան կերակուրը , երբ դուռը զարկին : Աչքին առաջն էր այդ վայրկեանը , իւր էրիկը , խեղճ Ստեփանը արիւնաթաթաւ պատգարակի մը մէջ . տարադուր որմնադիրն բարձր չէնքէ մը զըրած ինկած էր և գլուխը ջախջխած : Մարիամ (Հրանտի մայրը) երիտասարդ երիտասարդ , անոք անօդնական , իւր մէկ հատիկ տղովը որբեւայրի կը մնար :

Աստուած միայն գիտէ թէ ի՞նչ նեղութիւններով տղան մեծցուց , դստրոց տուաւ : Ի՞նչ աղւոր օր էր երբ տղան , գրքերով բեռնաւորուած , իրեն հետ կը վերադառնար պարգեւաբաշխութեան հանդիսէն , ուսման ընթացքը աւարտած : Բարեկամ կիները գինքը շրջապատած — աչքդ լոյս , Մարիամ տուտու « աչքդ լոյս , կըսէին , ալ նեղութիւն չունիս , ամէն բան պիտի մոռնաս , տղադ եկաւ քեզ հասաւ : Աստուած մարդուս ասանկ բարի զաւակ տայ : »

Խեղճ Մարեամը , ո՛րքան ուրախ էր , ո՛րքան գոհ այդ օրը : Իսկ այժմ իր Հրանտիկը , իր յոյսն ու սէրը ի՞նչ վիճակի մէջ էր : Դուրս ելաւ , արցունքներն սրբեց ու ներս մտաւ :

Ը.

Հրանտ գլուխը բարձին դրած , կարծես վերացած կը մտածէ : Ի՞նչ եղաւ իր երազը : Մաքովը կը թռչէր Յունիսի կիրակին , Կէօք—սուլի էր , կը տեսնէր Սօֆին և յետոյ ի՛նչեր անցան այդ օրէն ի վեր : Ա՛հ , աղջկան մը սէրն ուղեց վայելել , երազ մ'էր , բայց կեանքն էր ահա՛ որ այդ երազին գինը կը լինէր :

Յանկարծ կուգէ ելնել նստիլ , մայրն չորս կողմերէն կը բռնէ , տխուր ժպիտ մը կը ծածանի Հրանտի երեսներուն վրայ . կուգէ պատուհանը բանալ : — Չէ՛ , զաւակս , չէ՛ որդիս , մի՛ բանար , ցուրտ է , կը պազատի մայրը :

Բա՛ց պատուհանը խեղճ մայր , բա՛ց պատուհանը , չէ՛ս գիտեր թէ վշտաց վայրկենի

մը մէջ քաղցր յիշատակ մը պահ մը կենդանութիւն կը շնորհէ վշտահարին :

Կիթարայի մը ձայնն է որ կը լսուի խեղճ կոյր կիներն է որ կանցնի . աղքատ կիներ փողոցներն ման գալով իր կիսաւեր քնարովը կերգէ :

Յեթեր անդ կապուտակ
Էս ի Վոսփորին
Մեղմահոս պըլլան
Խոպոպք լուսնեկի :

Հրանտ այլալաժ է : Ո՞վ չգիտեր այն մեծ զօրութիւնը որ ձայնի մը յիշատակութիւնը մեր վրայ կունենայ : Երգի մը յիշատակը կաղդէ մինչեւ սրտին խորը : Մի քանի չեղտեր իրենց թեւերուն վրայ առած մեր հոգիները կը սաւառնացնեն դմեզ մանկութեան , պատանեկութեան , սիրոյ և բերկրանաց օրերուն մէջ : Հրանտ կերպարանափոխ եղած էր , այդ երգը կը հնչէր սրտին խորը , թունդ կը հանէր հոգին :

— Մայրիկ , քանի մը փարայ տուր , ըսաւ :

Կիթառին ձայնն ալ հեռուէն կուգար , բայց Սօֆիի դէմքն աւելի զօրաւոր կերպով կը պատկերանար Հրանտի աչքերուն : Ա՛յս վայրկեան մը թէ նշմարէր Սօֆիի երեսն , թէ կարենար ըսել մը գրկացը մէջ սեղմել զնա , թէ կարենար վայրկեան մը շնչել նորա շունչը , ինչպէս շուտ պիտի կենդանանար :

Գնաց կոյրը , հեռացաւ ձայնը բողբոլին , բայց թողուց իւր հետքը ինչպէս անոյշ բուրում մը բիւրեղին մէջ :

Թ.

Յաջորդ օրն աւելի խոնջ էր Հրանտ . գիշերն անոյշ երազները զինքն օրօրած էին , միշտ Սօֆիի հետ էր : Նախորդ օրերէն աւելի տկար վիճակի մէջ էր : Իւր բարկամներէն մին , շարաթական թերթերէ հաւաքածոյ մը կը խրկեր իրեն , եւ Հրանտ աչքէ կ'անցնէր : Նոյն օրն ալ Հրանտ սկսաւ քիչ մը թերթերուն վրայ նայիլ : Մէկէն ի մէկ ձեռքերը թողացին . գլուխը բարձին անկիւնը խօթեց եւ կը հեծկտար : Մայրը ահով դողով ներս եկաւ : Հրանտ միշտ կուլար : Լրագիրներէն միոյն մէջ « Աղգային » բաժնոյն ներքեւ կարդացած էր :

« Երէկ ի Պատրիարքարան չքեղ հանդէս մը կատարուեցաւ , ի ներկայութեան բազմ

մաթիւ եւ պատուաւոր ազգայնաց : Մեծահամբաւ եւ ազգասէր վաճառական Մեծապատիւ Յակոբիկ Եփէնտի . . . եանի նշանատուութեան հանդէսն էր ընդ Համեստափայլ օրիորդ Սօֆի . . . եանի . . . »

Ժ.

1881 տարւոյ դեկտ. 15ի կիրակին թէպէտ աճրեւ չկար , բայց տխուր մեղամալ՝ ձոտ օդ մ'էր : Բաւական է որ անձրեւ չըլլայ , Բերայ չէ կարող հանդարտ կենալ և փողոցներ լի են բազմութեամբ : Ժամը ջնանցած Մասէի կառքերու բազմութիւն մը կար , կրնանք ըսել թէ կառախումբ մ'էր : Այդ կառքերու գեղեցկութիւնը կառախաներու մաքուր զգեստներն , և ձերմակ ձեռնոցներն ենթադրել կուտային թէ՛ փառաւոր հարսանեաց մը համար են : Եւ այդպէս էր շատ հետաքրքիր լինելու հարկ չկար դիտելու համար այդ կառքերէն միոյն մէջ աղուոր աղջիկ մը հարսի զգեստներով էր : Կառքերը Թաքսիմի ճամբան ձեռք առին , և սկսան երկնալ դէպ ի Բանկալթի , ուրիշ հաւանօրէն վար պիտի իջնէին Վոսփորի գեղեցկէն մին : Հարսնեւորներու դէմքերն աւելորդ է ըսել թէ զուարթ էին . եթէ կային անհամբերք դոքա ալ հարս ու փեսան էին , որք կուզէին վայրկեան մը առաջ հասնիլ : Բայց աշխարհիս վրայ պատշաճութեան օրէնքներն եթէ չլինէին գուցէ աւելի հանդիստ լինէինք : Հարսնեւորներու կառքերն յանկարծ կանգ առին : Բանկալթիի փողոցի տունէ մը ժամկոչ մը , մի քանի տիրացուներ , երկու տէրտէր և դադաղ մը դուրս կ'ելլէին , պէտք էր տեղի տալ : Հարս և փեսայ իրենց կառքերու առակիներէն դուրս նայեցան . խիղճուկ ձայն մը կուգար :

— Վա՛յս Հրանտս , վա՛յս դաւակ :

Հրանտի դադաղ դուրս կը հանէին : Սօֆիի հարսանեաց կառքերն էին :

Այս է կեանքը :

Տասը օր առաջ տեղի ունեցաւ Նիւ-Եօքքի մէջ հանդիսաւոր արարողութիւն մը՝ քաղաքին նաւահանգստին մէջ գտնուած Պէրլօէ կղզւոյ վերեւ հաստատուելիք արձանին հիման տառջին քարը դնելու առթիւ :

Ազատութեան արձանը, որոյ պատկերը աստ կը ներկայացնենք, դարուս մէջ շինուած արձաններու հակայն է, թէ՛ նիւթական մեծութեամբ և թէ՛ արհեստական ճարտարութեամբ : Արձանը Ֆրանսայի մէջ, ի Բարիզ, Պարթօլտի եղբարց գործարանին մէջ շինուած և գրեթէ աւարտած է, ծախիւք Ֆրանսական ազգին իբր նուէր առ Ամերիկացիս, որ Նիւ-Եօքքի մէջ, Ուիկիանոսի եղբր, երեսն ի Ֆրանսա դարձած պիտի հաստատուի, ի յիշատակ այն փառաւոր աջակցութեան որ Ֆրանսան ունիւրեց Ամերիկայի Անկախութեան հաստատման և որոյ հարիւրերորդ տարեդարձը յիշատակը վերանորոգեց :

46 մեթր է արձանին բարձրութիւնը, ոտքերէն մինչեւ աջ ձեռքը բռնած ջահը. նոյնչափ բարձրութիւն ունի պատուանդանը, որոյ շինութիւնը նոր սկսաւ, և այսպէս ծովուն երեսէն 90 կամ 100 մեթր բարձրութիւն պիտի ունենայ, իրեն քով իբր գաճաճ մը թողոյ՝ Հոգոսի հռչակաւոր արձանը որ հազիւ 40—43 մեթր բարձրութիւն ունի :

Այս մեծութեամբ արձանի մը շինութիւնը յղանալ ո՛րչափ ալ դժուարին է՝ ա՛լ աւելի դժուարին է անոր շինութեան եղանակն որոշել : Պղնձէ միակտուր արձան մը անկարելի է 46 մեթր բարձրութեամբ շինել. եթէ մաս առ մաս պատրաստէին՝ այն ատեն դարձեալ մասերը կցելու դժուարութիւն կար :



թիւն կար : Արդէն թափօն շինուած մետաղեայ արձան մը այնքան ծանր կը կշռէ որ Ազատութեան արձանն միջիններով հոխաներու չափ ծանր պիտի յլար եթէ թափօն ըլար : Այս պատճառաւ Պարթօլտի եղբարք հետեւեալ կերպիւ դործեցին :

Նախ պատկերը շինելուին Պ. Լյօֆէլէր երեսելի ճարտարագէտին որ արձանին ձեւն յղաքած էր : Ապա բուն արձանին 1/16 ին չափ փոքր մի օրինակը շինեցին որ ունէր 2 մ 11 բարձրութիւն յոտից ջըգլուի : Յետոյ ասոր քառապատկեր մեծ մը շինեցին որ իսկականին 1/4 ն էր և ունէր 8 մ 30 բարձրութիւն, և վերջապէս ձեռնարկեցին բուն արձանին կազմութեանը :

Այս ալ հետեւեալ կերպիւ կատարուեցաւ :

Չափագիտական դասազան միջոցներով, որ համեմատութիւնք ճշդիւ պահելու կը ծառայէին՝ արձանին այլ և այլ մասերը շինեցին, ինչպէս թեւերը, գլուխը, ձեռաց ջահը, պարզապէս փայտէ կմախքով, որոյ վրայէն գաճով վերջնական կաղապարներ առին : Նոյն կըմախքը ամրոցոյձիւն երկաթէ շինուեցաւ մէկ կողմանէ, և միւս կողմանէ պղնձէ բարակ տախտակներ ծեծելով մարմնոյ այլ և այլ մասերուն, ձեւերը կ'առնէին կողապարէն օրինակելով և երկաթեայ կմախքին վրայ գամելով : Այս գործողութիւնքը համառօտիւ կը պատմենք. տասը տարիէ աւելի տեւեցին : 1871-ի գաղափարը յղացան և դեռ նոր աւարտած է արձանը :

Ինչպէս որ ըսինք, 46 մեթր է արձանին բարձրութիւնը, ըսել է Բարիզի վանսօմի սիւնէն 2 մեթր աւելի : Յուշամատը

ունի 2 մ 45 երկայնութիւն և 4 մ 44 շրջագրաւ :
Եզրունքը 0 մ 33 : Գլուխը առանձինն 4 մ 40 բարձ-
րութիւն ունի , աչքը 0 մ 65 լայնք և քիթը 4 մ 42 երկայնութիւն :

Գլխուն դադարածն 5 ճաճանչներ կը ծնին , մէն
մի ճաճանչը ոսկեգոծեալ , որով ցերեկին արեգական
ճառագայթները ցոլայնելով պիտի փայլին և գիշերը
եղբարական լոյս պիտի արձակեն հինգ տարբեր ուղ-
ղութիւններով , ու արձանը պիտի ծառայէ իբր փա-
րոս : Ճաճանչներն ունին 3 1/2 մեթր երկայնութիւն :

1878 ին ֆարիդի մեծ արուեստահանդիսին դը-
լուխը պատրաստ էր : Տաննէ աւելի անձինը կարող
եղան այս գլխուն մէջ ժողով կազմել : Վերջերս 26
անձերու ճաշ մը արուեստաւ փորին մէջ և ծառայնե-

րը ամենայն դիւրութեամբ կը շրջէին : Աջ թեւին
մէջ սանդուխ մը կայ որով մինչեւ ջահին քով կ'ել-
լուի : 15 հոգի դիւրութեամբ կը շրջին ջահին բո-
լորտիքը , ուր պիտի կենան նաւահանգստին պահա-
պանները :

Արձանը 300 կտորի պիտի վերածուի ի Միաց-
եալ Նահանգս փոխադրուելու համար :


Գալով արժէքին , այժմէն չգիտցուի թէ ի՞նչ
ծախքով այս արձանը վերջնական դիրքն պիտի ստա-
նայ իւր պատուանդանով միասին : Վեր ի վերջը կը
կարծուի թէ 600,000 ֆրանք միայն շինութեանը
բաւ է , որով նոյն չափ մ'ալ պատուանդանին հա-
մար հաշուելով 4,200,000 ֆրանք կը կարծուի ամ-
բողջ ծախքը :

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Խ Ա Ղ Ե Ր Ե Ի Զ Ո Ւ Ա Ր Ժ Ա Ն Ի Ք

Ա Ռ Ա Ն Յ Գ Ո Ր Ծ Ի Ք Ի Ե Լ Ե Ք Տ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Առանց գործիքի եւ
լեքարականութիւն աւ-
ռաջ բերելու պարզ
եղանակ մ'է հասարակ
թերթ մը թուղթը տաք-
ցընել կրակի քով : Ա-
պա ջերմացեալ թուղթը
յուր հաղորդ իջ մարմ-
նույ մը , զոր օրինակ սե-
ղանի մը վրայ . տարա-
ծել և ձեռաց կակուղ
կողմով կամ իդական
խեճի կտորով մը շիկել
հարկ է : Թուղթը ան-
միջապէս ելեքտրական



նութեամբ կը լեցուի
և այս ակներև ընելու
համար բաւ է թուղթը
զատել սեղանէն : Այն
ստեղծ զգալի դիմադ-
րութիւն մը կը տեսնուի
թուղթը սեղանէն զա-
տելու համար , որպէս
թէ երկու մարմինները
իրարու փակած ըլլային
անտեսանելի կապերով
որք խզուին որոշապէս
ըսանելի չոր ճարճատ-
մամբ մը : Թուղթը կըր-
նանք սահեցնել մինչեւ

սեղանին եզերքը , ուրիշ փոխանակ վար իյնալու մէկ անկիւնէն կախուած կը մնայ :
Նմանապէս թերթ մը թուղթ դռան մը տախտակին քսելով անդ կը փակչի կը մնայ :

ՓԵՍԱՅՆԵՐ

(Աւարի)

ՓԵՍԱՅՆ ԱՍԷ

Տո՛ւր ինձ սիրտդ , ո՛վ Հայ աղջիկ ,
ես երջանիկ քեզ կ'անեմ :

Ազգ ու ազինք կը նըւահեմ :

Ու ոտքիդ տակ կը դընեմ :

Աշխարհ փընտռէ՛ ու չես գտնել
երջանիկ քեզ նըման կին :

Զե՛ռքդ կ'առնուս քնուծ՝ ու ոօզգա 1

Տո՛ւր թէ կըտաս աջ ու ձախ :

Ծառայք նաժիշտք-Մաշքա Բուզքա

1 Մտրակ և Գան :

Միշտ կունենանք քեզմէ վախ:
Շիշ ու շիշօքը 2 վոտքայով լի 3
Պահարանիդ մէջ շարած.....
Աղջիկ՝ այդպէս կեանք բարեւի
Կը խոստանայ քեզ Աստուած.....

ԱՂՋԻԿՆ ՊԱՏԱՍԽԱՆԷ

25՝, Ռուս փեսայ, այդ բաներուն
2ի ախորժիկ Հայ եւան.
Քու խոստացած երջանկութիւնն
Թող վայելէ Ռուս տէվան 4:

2

ՓԵՍԱՅՆ

Ի՛նձ տուր սիրտդ. ո՛վ Հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կ'անեմ.
Գոհարի մէջ կը փաթածեմ.
Կանանոցըս կը տանիմ.
Գիշեր ցերեկ խունկ հալուէներ
Քու առջեւը կը ծըխեն.
Վարդաշրթի շատրոնաններ
Ոտքերիդ տակ կը բըղխին.
2ես անջատիլ դու իմ գրկէն
2երմ համբուրով արեցած.
Սեւ նաժիշտներ քու ակնարկին
Կը դիտեն միշտ սարսեցած:

ԱՂՋԻԿՆ

25՝, Պարս փեսայ, այդ բաներուն
Երբէք ես չեմ ախորժալ.
Քու այդ ամեն երջանկութիւնն
Թո՛ղ վայելէ քո գօզալ:

3

ՓԵՍԱՅՆ

Տո՛ւր ինձ սիրտդ, ո՛վ Հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կ'անեմ,
Շիշի, Ռիշի, Միշի, Թիշի-
Քեզմէն անպակաս կ'անեմ.
Տօն օրերը, կէս օրէն յետ,
Ուղիղ կ'երթաս Բալ-Մաքի՛լ,
Կուշտ կը պարես Թուանբա՛ն, Քանքան
Վա՛լս, Մազուրքա ու Քատրի՛լ.
Ուրախ կ'անցնի՝ մանկութիւնդ,
Կապրիս ինչպէս Թիթեռնիկ.
Դարձո՛ւր երեսդ Հայութենէ,
Ապրէ՛ մեզպէս երջանիկ:

1 Միշի 2 Շիշի 3 Աղջիկ

ԱՂՋԻԿՆ

Գաղղիացի՛, այդպէս կեանքին
Հայ աղջրկունք սէր չունին.
Կեանքի այդքան մեծ բարիքին
Հասցուր դու քու Մամգէլին:

4

ՓԵՍԱՅՆ

Տո՛ւր ինձ սիրտդ, ո՛վ Հայ աղջիկ,
Ես երջանիկ քեզ կ'անեմ,
Երշիկ, ապուխտ ու գարեջուր
Բերնէդ անպակաս կ'անեմ.
Իմ տան մէջը դու կըլինիս
Իսկական մայր, տանտիկին,
Ամբողջ օրը վաֆլի կ'փես,
Ծիծ կուտաս քու զաւակին.
Պահարանդ ու սընդուկդ
Կը լըցնեմ ճոխ աւարով-
Գաղղիայէն գողցած Թաւնած
Արծաթեղէն իրերով:

ԱՂՋԻԿՆ

Թեւեթն փեսայ՝ այդպէս կեանքին
Ես ախորժակ, սէր չունիմ.
Այդ խոստացած քու բարիքին
Հասցուր դու քու Ծաւնի՛ն 1:

5

ՓԵՍԱՅՆ

2եռքդ ինձ տո՛ւր, իմ նազելի,
Թողնենք այս նոր խուժաստան
Հայոց ազգիս գաղթենք դէպի
Վանը, - մեր բնակարան.
Այն տեղ Թէեւ մեզ չի մընում
Անդորրութիւն, կեանք փափուկ,
Գէթ չենք ստիպուիլ սուրբ զգացմունքը
Պառել սրտի մէջ ծածուկ.
Հայ լինելէ չենք ամաչիլ,
Անտէր, նժդեհ չենք մընալ,
Սէրն օտարին (գարշելի՛ բեռ)
Կեղծ ժպիտով չենք մուրալ:
Կեանքերիս կէսն ծառայ եղանք
Գէթ կէսն լինինք մենք հանգիստ.
Տո՛ւր ուրեմն ինձ քու ձեռքը,
Թողնենք այս նոր խուժաստան
Հայոց ազգիս գաղթենք դէպի
Վանը - մեր բնակարան:

ԱՂՋԻԿՆ

Ա՛ն իմ ձեռքը, ա՛ն իմ սիրտը,
Հայ պատանի իմ անգին.
Զինակից եմ քեզ, ընկեր իմ,
Մինչ քու մէջ կայ Հայ ոգին:

ԳԱՄԱՌ-ԳԱԹԻՊԱ

1 Աղջիկ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԸ

Յայտնի է թէ Եւրոպական բոլոր աղ-
գեր առաջին աստիճանի կարեւորութիւն
կ'ընծայեն երկրագործութեան բոլոր ճիւ-
ղերու զարգացման համար, ուստի մեծ խը-
նամօք կ'աշխատին բարեփոխել նաեւ անտառ-
ներու վիճակը եւ յաւելուլ նոցա արտա-
դրութիւնը :

Բարիկի երկրագործական կարեւոր թերթ
մը, իւր վերջին թիւերէն միոյն մէջ կը հը-
րատարակէ Գերմանացի Պ. Էդէլի մէկ տե-
ղեկագիրն աշխարհի բոլոր անտառներու նը-
կատմամբ, որոյ Եւրոպական մասն օգտա-
կար համարեցինք ներկայել Մասիսի ըն-
թերցողաց :

Պ. Էդէլ կ'սկսի Գերմանիայէն եւ կ'ըսէ
թէ այս երկիրը ունի ընդարձակ եւ հոծ ան-
տառներ. բայց իւր սպառում 2,500,000 խո-
րանարդ մէթր աւելի է քան զոր կարտադ-
րէ. բայց այս ջնջանակեր թէ Արմանիա
փայտ չունի. այլ հարթ ուղիներ չունենա-
լուն համար փայտի փոխադրութիւնն ան-
կարելի կըլլայ : Այս մասին Պ. Էդէլ կը պատ-
մէ թէ Բրուսիացի հարուստ հողատէր մը ա-
ռաջարկեց ամենընտիր տեսակէն նոճիի ծառ
մը նուիրել ծովային նախարարութեան :
Թէեւ մարդուն անտառը Քոնսկայէրկէն
տասը մղոն հեռի էր, սակայն Բրուսիոյ նա-
ւային շինութեանց վերադաստիճանը պարտաւո-
րեցաւ մերժել զայդ նուէր՝ առարկելով թէ
այդ փայտին ի նաւահանգիստ փոխադրու-
թիւնն օտար երկրէ մը բերուած նոյն օրինակ
փայտի մը ծախսուց կրկնապատիկն էր : Այս-
պէս գրեթէ ամբողջ Բրուսիոյ մէջ անտառա-
տէրը չէ կարող իւր փայտն օրինաւոր գնով ի
վաճառ դնել, մինչդեռ օտար ազգեր ահագին
քանակութեամբ փայտ կը ներմուծեն ի Բը-
րուսիա : Պ. Էդէլ դո՛ւ կ'երեւայ անտառնե-
րու այս վիճակէն եւ կը նմանեցունէ զայն
խնայողութեան սնտուկի մը, յուսալով որ
երբ Գերմանիոյ համար օտար աշխարհաց
փայտն սպառի, իւր փայտն իրեն կը բաւէ :

Աւստրիոյ Հունգարիոյ մէջ անտառները
խնամքէ զուրկ են, երկարատեւ են ի վեր
կացին եւ տապար անխնայ ջարդ կ'ընեն,
եւ ամենահին ու գեղեցիկ անտառներ պա-

տառ մը հացի համար օտար շահախնդրու-
թեանց նիւթ եղած են : Դանուբեան հո-
վիտներու եւ Հունգարիոյ անթափանցելի
անտառները առասպելի կարգ անցած են
այժմ, եւ Խրվաթիոյ ու Սլաւոնիոյ անսպա-
ռելի անտառներու տարածութիւնները մերկ
դաշտերու վերածուած են : Ահագին փայ-
տալեղջեր Դանուբի ճանապարհով Սեւ ծով
կ'իջնեն, մինչդեռ միւս կողմանէ Ալպեան
լեռներէ մեծաքանակ ընտիր փայտ կ'իջնէ
ի Թրիէսթէ, Անգլիոյ, Ֆրանսայի եւ տեղա-
կան անաղձագործութեան համար :

Ռուսիա ունի բաւական ընդարձակ ան-
տառներ, զի իւր հողային տարածութիւնը
չատ մեծ է իւր բնակչաց թւոյն հետ բաղ-
դատմամբ : Սակայն Ռուսիա ցուրտ երկիր է
և չատ փայտ սպառելու պէտք ունի, նաեւ
Ռուսիոյ մէջ քարը հաղուագիւտ կը համար-
ուի, եւ Ռուսք իրենց շինութեանց մեծա-
զոյն մասը փայտէ կը շինեն քան թէ քարէ,
վասն զի քարը ջերմութիւնը կորուսանող է,
մինչդեռ փայտը կը պահէ զայն եւ ցուրտ
երկրի չէնքերու յարմարագոյն նիւթ կը կաղ-
մէ : Նկատելի է նաեւ թէ Ռուսիոյ մէջ եր-
կաթուղիք եւ խճուղիք զարգանալու վիճակի
մէջ են եւ սոցա բազմախառն փայտի ա-
ռեւտուրն մեծ մղում պիտի ստանայ և որոյ
արդիւնք պիտի ըլլայ անտառներու սպա-
ռումը :

Անգլիոյ համար կրնամք ըսել թէ նա
բնաւ անտառ չունի, և իւր անտառային
վիճակ երբեք բաղդատելի չէ Եւրոպիոյ միւս
երկիրներու հետ : Նա կ'ստանայ 500 միլիօն
անգլիական խորանարդ ոտք փայտ Ամե-
րիկայի, Հնդկաստանի և Աւստրալիոյ իւր
ընդարձակ երկիրներէն, և երբեմն ալ Շուէ-
տէն և Նորվեգիայէն :

Ատլանդեան ովիւստիսի ծովեզերեայ բո-
լոր երկիրներ փայտ կ'ընդունին Շուէտէն,
Նորվեգիայէն և Ֆինտլանտիայէն, որոց չո-
ճը, եղեւինը եւ ուետինաւոր փայտը կը վա-
ճառուի ի Պրէզիլեա, ի Ռիոյ Եանէյրօ,
Հակոտեայ երկիրս և յԱւստրալիա : Վեր-
ջին տասն տարիներու մէջ թէեւ այս եր-
կիրներ կրկնապատկեցին իրենց փայտի ար-
տադրութիւնը, բայց անշուշտ ի մեծ վնաս
երկրին անտառներուն զորս կը ջարդեն
անխնայ :

Մեծ ուշադրութեան արժանի է այս

երկիրներու ցուրտ կլիմայն, որով փայտի սպառումը շատ կ'ըլլայ, իսկ ընդհանրական անտառներու բարդաւաճումը դանդաղ կ'ըլլայ և դժուարին:

Սպանիա, Իտալիա, Արեւելից երկիրներէն մաս մը և Ալբիկէ նշանաւոր արտադրութիւն չ'ունին:

Թիւրքիա նաեւ լաւագոյն վիճակ մը չունի այս մասին. ճշմարիտ է որ անտառային ճոխ հարստութիւններ ունի ի ձեռին, սակայն անխնամ թողած է զանոնք: Երբեմն փորձեր եղած են անտառներուն վիճակին բարդեցնելու և հմուտ անտառագիտաց խորհուրդներն արդիւնաւորելու մտօք, սակայն ատոնք եւս տեսողութիւն ունեցած չ'են:

Պ. Էզէլ իրաւամբ կը զարմանայ թէ Վէլիքաւորի այն գեղեցիկ և ոքանշելի անտառն ինչպէս անփտանդ մնացեր է ցարդ՝ մատակարարելով հանդերձ ընտիր փայտ Ռուսիոյ և Անգղիոյ ատաղձի գործարաններուն: Սոյն անտառն կը բաղկանայ գլխաւորաբար կաղնիէ, ուրիշ, չաղանակէնիէ և նպաստել կը թուի Կ. Պօլսոյ ջուր մատակարարող աւաւաններուն և աւազաններուն պաշտպանութեան:

Գալով Ֆրանսայի, սա 1820 ին կ'արտադրէր 120,000,000 ֆր. արժողութեամբ փայտ, կամ, 2,000,000 խորանարդ մէթր փայտ ատաղձագործութեան համար և 35,000,000 խորանարդ մէթր փայտ վառելու համար: Նաեւ Ֆրանսա զրօն կընդունէր 25,000,000 ֆր. արժողութեամբ փայտ, 1866ին, այսինքն կէս դարու ժամանակամիջոցի մէջ փայտի սպառումը 250,000,000 ֆր. բարձրացաւ, որոյ 150,002,000 ֆր. օտար երկիրներու կը վճարուէր: Այսօր, այսինքն 18 տարի վերջ, Ֆրանսա կ'ընդունի օտար երկիրներէ 200,000,000 ֆր. արժողութեամբ փայտ, յորմէ կերեւայ որ Ֆրանսա փայտի համար օտար երկիրներու կը վճարէ այժմ ութն անգամ աւելի զրամքան 1820ին, և կ'սպառէ իւր արտադրութեան եռասպատիկը:

Ռ.

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ

30 ՅՈՒԼԻՍ — ՕԳՈՍՏՈՍ 3

Ս Ր Տ Ա Ք Ի Ն

— Ֆրանսական Սահմանադրութեան վերաբնութեան համար Մերկալոյտի և Երեսփոխանական ժողովոյ միացմամբ կազմեալ վեհաժողովն օգոստոս 4ին առաջին նիստն ըրաւ ի վերսայլ: Մերկալոյտի նախագահն Պ. Լը Սուայէ կը նախագահէր ժողովին: Վեհաժողովը ներքին կանոնադիր չունենալով, նախագահն առաջարկեց ամբողջովին ընդունիլ 1871ի կանոնադիր. այս առաջարկ մեծ աղմուկ և ընդդիմութեամբ ինքներ յարոյց, և հոսակ ուրեմն ընդունուեցաւ 250ի գէմ 520 քուէով: Ապա նախարարապետ Պ. Ժիւլ Ֆէրրի բեմն ելաւ Սահմանադրութեան վերաբնութեան ծրագրովը ներկայելու. ընդդիմադիր կուսակցութեան կողմէ ընդդիմութիւնը և ընդմիջումներ տեղի կունենային. մեծ աղմուկ և շփոթութիւն կը տիրէր զոր նախագահն հազիւ կարող եղաւ հանդարտեցնել: Պ. Դէսուլէնի առաջարկութեամբ որոշուեցաւ 30 անդամէ բաղկացեալ յանձնաժողովոյ մը նախաքննութեան յղել նախարարական ծրագիրը. յանձնաժողովոյ ընտրութիւնը մնաց յաջորդ նստին: Վեհաժողովոյ երկրորդ նիստն հոն դարտ եղաւ բաղդատմամբ առաջնոյն, թէ և իսկզբան բաւական վէճեր և աղմկայոյզ միջադէպեր ծագեցան նախագահին և ընդդիմադիր երեսփոխանաց միջեւ. ծայրայեղ ձախակողմեանը յայտարարեցին թէ յանձնաժողովոյ ընտրութեան չափով մասնակցին զի ընդունուած ընտրական եղանակն իրենց իրաւունքները կը կապտէ: Չորս ժամ տեւեց քուէհամարն, 800 ժողովականաց կէսը միայն մասնակցած էին ընտրութեան. ընտրեալ յանձնաժողովը նպաստաւոր էր Պ. Ֆէրրիի կարգացած վերաբնական ծրագրին: Կարգ մը բարեփոխումներ և առաջարկներ մատուցուեցան Նախագահին և յանձնաժողովոյ նախաքննութեան յղուեցան: Երեսնից յանձնաժողովը նոյն օրը դումարելով, որոշեց նախաձեռնով մերժել

տալ Վեհաժողովոյ մէջ ամեն նոր առաջարկ որ երկուց ժողովոյ զատ զատ քուէարկած վերաքննական ծրագրէն դուրս է : Այսպէս յոյժ կարճացան Վեհաժողովոյ աշխատութիւնք :

Երրորդ նիստն առաջին երկուքէն աւելի բարեկարգ եղաւ : Պ. Ժէռվիլը Ռէալ երկտասարդ վաստաբանը, տեղեկաբեր յանձնաժողովոյ, առանց չլիթելու բաղմամբ ընդմիջումներէ, կարգաց տեղեկագիրն որ կը քննէր վերաքննութեան խնդրոյն երկուց ժողովոյ կողմէ գտած ընդունելութիւնն և չափաւորումներն, և կեցրակացներ ընդունելութեան կառավարական ծրագրին : Ժողովն որոշեց հինգ շաբաթի օգոստոս 7ին ըսկըսիլ մեծ վիճաբանութիւնն որոյ վրայ տեղեկութիւնք յաջորդ շաբաթ : Յիշատակենք միայն թէ՛ օգոստոս 13ի Վեհաժողովոյ ներկայացեալ բոլոր բարեփոխիչ առաջարկները մերժելէ յետոյ, 172ի դէմ 509 ձայնիւ ընդունած է Սահմանադրութեան վերաքննութեան կառավարական ծրագիրն :

— Ֆրանս Եօզէֆ կայսրն օգոստոս 6ին Խըլէ յատուկ կառախումբով Էպէնսէ դնայ Վիլհէլմ կայսրը դիմաւորելու . երկու կայսերը սիրալիր ողջունեցին զիրար և յիշ հասան կէս օրին . Աւստրիոյ Էլիզապէթ կայսրուհին, Քալնոքի և Թիւմա նախարարապետը և բարձրատիճան պաշտօնատարը ընդունեցին զանոնք :

Ժողովուրդը ցնծալից ընդունելութիւն մ'ըբաւ երկուց վեհապետաց : Աւստրիոյ կայսրն ու կայսրուհին իրենց Վեհ հիւրն առաջնորդեցին պատրաստեալ օթեւանն . Ն. Վեհափառութիւն լոգարան մտան, ապա ժամ մը զբաղեցաւ իրեն ուղղեալ նամակներն աչքէ անցնելու, հեռագիր զրկեց Պերլին՝ Ասկուստայ կայսրուհւոյն և դահաժառանգ Խիսանին, և քանի մը այցելութիւններէ յետոյ, Աւստրիոյ արտաքին գործոց նախարար Քալնոքի կոմսն ընդունեց : Կէս օրին շքեղ սեղան տրուեցաւ և երկոյնն արտասովոր ներկայացում կար թատրոնը . յաջորդ առաւօտուն շատ կանուխ ելաւ, աշխատեցաւ իւր քաղաքական դիւանի տընօրէնին հետ, ընդունեց նորէն Ղ. Քալնոքի, տեսակցեցաւ նաև Պ. Թիւմա հետ, նորէն սեղան և ընդունելութիւնք : Գերմանիոյ կայսրը Պերլին վերադարձաւ ժամ 3ին :

— Վիլհէլմէն առ Թան ուղղեալ հեռագրի մը համեմատ զրոյց կայ թէ Քալնոքի կոմսին ուղևորութիւնն յիշ, իւր ներկայութիւնն Վեհապետաց տեսակցութեան և առաջիկայ տեսակցութիւնն ի Կալդէյն Պիլմարք իշխանին և Քալնոքի կոմսին՝ նպատակ ունին վերանորոգումն Աւստրո-Գերմանական նիզակաղցութեան դաշնագրին, որոյ պայմանաժամը կը լըրանայ սեպտեմբերի վերջն : Այս տարւոյ տեսակցութիւնը քաղաքական հանգամանք չունի բնաւ, բայց և այնպէս պիտի ծառայէ պահպանելու երկուց կայսերաց միջև կեցած ընտիր յարաբերութիւններն :

Օգոստոս 14 թուով Հալմաի հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ Քալնոքի կոմսը նոյն օրը տեսակցութիւն մը պիտի ունենայ Պրիւմարք իշխանին հետ ի Ֆարմին :

— Եգիպտական խնդրոյն ելմտական մասը կարգադրելու համար Լոնտոնի մէջ գումարեալ դեսպանախորհուրդն լուծուեցաւ առանց ելք մը ունենալու : Ասոր պատճառըն է Անգլիոյ և Ֆրանսայի անհամաձայնութիւնն : Անգլիա կողմէր զեզել Եգիպտոսի պարտուց տուիտն, մինչ Ֆրանսա կողմէր անվթար պահել լեփթանթի օրէնքն և տոկոսներուն չդաշխել : Միւս տերութիւնք, նոյն խնդր. Գուռն, որ ներկայացուցիչ ունէր դեսպանախորհրդոյ մէջ, Միւղիւրիւս փաշա, այս խորհրդոց մէջ մեծագոյն շահ չունենալով թող տուած էին որ Անգլիա և Ֆրանսա զիրար համոզեն օտարապի արժէտեարց պահանջներուն նկատմամբ : Համաձայնութեան շատ փորձերէ յետոյ, կարելի չեղաւ որոշման մը յանգիլ : Դեսպանախորհրդոյ ապարդիւն ելից պատճառաւ, լուծուեցաւ նաև Անկլո-Ֆրանսական համաձայնութիւնն Եգիպտոսի խնդրոյն ուրիշ մասանց, մանաւանդ « Բոնդուլ » մասին :

— Անգլիական կառավարութիւնը խորհրդարանին ներկայեց Կապոյտ Տետրակ մը՝ որ Եգիպտական ելեւմտից վերաբերեալ նարադոյն պաշտօնագրեր կը պարունակէ :

— Անգլ. կառավարութեան կողմէ Լորտ Նորթսպրուք Եգիպտոս կերթայ իրաց վիճակը քննելու : Լորտերու ժողովոյ օգոստ. 7ին նստին մէջ հարցում ուղղուելով այս մասին, Լորտ Կրանվիլ պատասխանեց թէ տրուելիք իշխանութեանց հրահանգներն այժմ կը խըմ

բազրուին, և երբ Վեհ թագուհւոյն հաւանութիւնն առանան, խորհրդարանին պիտի ներկայացունին: Նախարարն յարեց թէ Լորտ Նորթպրուքի պաշտօնի մասին Անգլիական վարութիւնն տրդէն բանակցած է Վեհ Սուլթանին հետ: Նոյն օրը երեսփոխանաց ժողովոյ մէջ ալ հարցում մ'ուղղուեցաւ այս մասին, բայց Լորտ Կրանվիլ չուզեց պատասխանել, առարկելով թէ պատասխան մը տալով, խնդիրը միակողմանի կերպիւ ներկայացուցած պիտի լինի ժողովոյն:

Լորտ Նորթպրուք օգոստ. ամսոյ դէպ ի վերջը Լոնտոնէն պիտի մեկնի և Թրիէսթ պիտի երթայ, ուր իրեն պիտի ընկերանայ Սըր Իվին Պէյրիկ (Անգլ. քաղաքական գործակատար) և երկուքն Ալեքսանդրիա պիտի երթան:

— Քիչքնքր հազարապետը Տոնկոլայէ կը հեռագրէ օգոստ. 4 թուով «Կորտոն փաշա խարդումէ նամակ մը գրկած է աստ, յորում կըսէ թէ խարդում և Սենասը տակաւին կը դիմագրեն: Մէհտիի մարդոց: Խարդումի պաշարումը կը շարունակէ, բայց ապտամբք ետ քաշուած են իրենց առջի դիրքերէն: Ապստամբաց բանակին թիւն է 16,000 զօրք: Կորտոն փաշա ունի եօթն զինեալ չոգենաւներ որովք ամեն կողմ յարձակումներ կընէ: Պերսիք քաղաքն ինկաւ մատնութեամբ եգիպտական կառավարչին՝ Հիւսէյին խալիֆա փաշային, որ թող տըւաւ ապստամբաց ներս մտնելը:

— Լոնտոնի լրագիրք Շանկայիէ առնելով օգոստ. 10 թիւ հեռագիր մը կը հըրատարակեն, ծանուցանող թէ Քէ-Լուենի գրաւումէն առաջ Ֆրանսացիք կղզին ուրմբակոծեցին իբր մէկ ժամ: Նաւահանգստին ամրութիւնները քանդուեցան: Չինական զօրքերը մեկնեցան Քէ-Լուենիէ: Անոնց կորուստներն յայտնի չեն: Ֆրանսացիք կորուստ չունեցան, Բուրպէ ծովակալը կը գտնուի միշտ Ֆու-Չէուի դիմաց, Ֆրանսական չորս մարտանաւեր կը կենան Վու-Սոնիկի դիմաց:

— Ըստ վերջին լրոց Բուրպէ ծովակալին հրամանաց ներքեւ գտնուող Ֆրանսական նաւախումբը ունակոծեր է զՔէլուենի, որ Զորմուզ կղզոյն հիւսիսակողմը կը գտնուի և գրաւեր է այդ քաղաք: Բեքինի Ֆրանսա-

կան զեսպան Պ. Բադնոդո Չինական կառավարութեան հաղորդեց Քէլուենի անկումն, յայտարարելով թէ Ֆրանսա զօրք պիտի պահէ հոն մինչև որ Չինաստան վճարէ Ֆրանսայի պահանջած պատերազմական տուգանքն, որ 250 միլիոն ֆրանքէն 80 միլիոն ֆրանքի իջած է:

— Չստուգուեցաւ այն կարծիք թէ Ֆրանսայի և Չինաստանի խնդիրը կարգադրելու համար ամերիկեան իրաւարարութեան պիտի դիմուի: Այս խնդրոց վրայ Միացեալ Նահանգաց լրագիրներուն գործածած լեզուէն կը տեսնուի թէ այս երկրի մէջ զօրաւոր համակրանք կայ Չինաստանի նկատմամբ, թէև Չինացի գործաւորք և արհեստաւորք Միացեալ Նահանգներէն կարտաքսուին:

— Այս օրերս Թէհրանէ Բեդրսպուրկ կերթայ արտասովոր զեսպանութիւն մը, ընդ առաջնորդութեամբ մեծ արարողապետ Եահեա Խանի, եղբայր նախորդ նախարարապետին. զեսպանութեան պաշտօնն է Ռուսիոյ դահաժառանգ իշխանին մատուցանել Արեգական և Առիւծի պատուանշանը, զոր կընծայէ Պարսից Շահը: Այս իրողութիւն մտանաւոր նշանակութիւն կըստանայ հիմայ որ Պարսկաստանի մէջ յիշխանութիւն կոչուած է Ռուսական դաշնակցութեան բարեկամ Մեծ-Եպարդոս մը: Հաւանական է որ յիշեալ զեսպանութիւնը պաշտօն ունենայ նաև գաղտնի դաշնագիր մը կնքելու: Կը կարծուի թէ այս դաշնակցութիւն Ռուսոյ-Պարսկական սահմանադիմաց խնդիրներու կը վերաբերի:

— Թայմիի թղթակիցն ի ԹանՃէր կը հեռագրէ թէ Մարոքի Սուլթանն հրամայած է 4—5000 զօրք համախմբել Ալանէդ: Այս զօրքեր պիտի զարնեն Անկարա, Գապիլա ցեղն որ խնդրած էր Ֆրանսայի պաշտպանութիւնն. հրաման տրուած է բնաջինջ ընել այդ ցեղը: Արք սրէ պիտի անցունի, կանայք և մանկունք ի գերութիւն պիտի ենթարկին և ինչքերը պիտի դրաւին: Թղթակիցը կը յարէ թէ այս հանգամանք Ֆրանսան դրդուելու և նորա ասպարէզ կարգալու բնութիւնն ունին:

Ն Ե Ր Ք Ի Ն

— Առեւտրական և երկրագործական նախարար Սուպին փառա յիշատակադիր մ'ուզղեր է Մեծ Եղարքոս բարձր. Սայիտ փառալայի, յորում ընդարձակ կերպով պարզուած են ո՛չ միայն երկրագործական սենեկի մը հաստատման պէտքն, այլ նաև Պոլսոյ մէջ երկրագործական զրահատուն մը հիմնելու օգտակարութիւնն, որ դաւառաց մէջ մասնաձիւղեր ալ ունենայ։ Այս հաստատութիւնը պիտի օգնեն այն աղքատ երկրագործաց, որք չկրնալով մշակել իրենց դաշտերը, խոտան կը թողուն ցայնս, ուսկից մեծ վնաս յառաջ կուգայ թէ՛ կալուածատեւարց, և թէ՛ կայսերական դանձուն ու երկրագործական վիճակին։

Այդ գրամատան համար հարկ եղած դրամագլուխը կայսերական կառավարութեան կողմէ պիտի մատակարարուի, և հաստատութեան համար շահու մասնաւոր աղբիւրներ պիտի յատկանան նորա ապագայն ապահովելու համար։

— Երկու արուեստահանդէսը տեղի պիտի ունենան ի մօտոյ, մին՝ Ամերիկայի Նոր Օրլէանի դաւառին մէջ և միւսն՝ յՕտեսա։ Ռուսական և Ամերիկեան կառավարութիւնը հրաւեր զրկած են Բ. Դրան, որ պատասխանած չէ դեռ, ուզելով կանխաւ արուեստահանդիսից ծրագրերը քննել։

— Ներքին գործոց նախարարութիւնը չըջաբերականաւ պատուիրեց գաւառաց կուսակալներուն որ կարեւոր դէպքերն միայն հեռագրաւ հաղորդեն ի Կ. Պոլիս, իսկ երկրորդական դէպքերն ամեն շաբաթ տեղեկագրով զրկեն թղթատարութեան միջոցաւ։

— Անցեալ շաբաթ օր Օսմանեան միջազգային թղթատարութեան պայուսակը Մախուսէի Տօրնա-Պահճէ չողենաւր փոխադրեց ի Վառնա. թէ և Լոյտի չողենաւրն երկու ժամ առաջ ճամբայ ելած էր, սակայն կիրակի առաւօտ սրարչաւ կառախումբին մեկնելէն 10 վայրկեան յետոյ Վառնա հասաւ, և պայուսակն յատուկ կառախումբով զրկուեցաւ։ Երեքշաբթի օրն ալ Շէրէֆ Թէսան չողենաւր փոխադրեց թղթատարական պայուսակը, բայց դարձեալ չհասաւ Վառնայի կառախումբին, որ մեկնած է առանց Օսմանեան պայուսակաց։

— Հալաթ ունեցող վաճառականաց ու սեղանաւորաց կողմէ 50ի չափ անձինք երեքշաբթի օրը Բ. Դուռն երթալով, հալաթէյի խնդրոյն վրայ Մեծ Եղարքոսին ազերսագիր մատուցեր են։ Ն. Բարձրութիւնըն երկու հոգի կոչել տալով, ծանուցեր է թէ երևական պաշտօնատունն ի նկատ առած է իրենց խնդիրն, թէ պարտին ըզգուշանալ բաղմութեամբ դիմել, որ անպատշաճ է եւ կրնայ վնասել իրենց խնդրոյն, եւ թէ կրնան երթալ երևական պաշտօնատունն. եւ տեղեկութիւն առնուլ, առանց իրեն կամ այլոք դիմելու։ Զորեքշաբթի օրը վաճառականը Վալաթիա ժողով դուռնացին այս խնդրոյն վրայ։

— Վեհ. Սուլթանն 150 Օսմ. ոսկի նրբիրեց. Կէլիպօլուի Րիւշտիյէ վարժարանին։

— Կ. Պոլսոյ առողջապահական միջազգային խորհրդոյ օտար պատուիրակը երկու շաբաթէ հետէ չէին մասնակցեր ժողովոյ աշխատութեանց, Օսմ. եօթն նոր անդամոց յաւելման խնդրոյն պատճառաւ. այժմ Բ. Դուռն մէկդի թողած լինելով սոյն առաջարկն, օտար պատուիրակը ժողովոյ դնացին այս չորեքշաբթի եւ համադուստր նիստ մ'ըրին։

— Դատական նախարարը պատուիրեց մայրաքաղաքիս եւ գաւառական դատարանաց նախագահներուն որպէս զի վճռադրոց ստորագրութիւնը չյապաղեցնեն, որպէս կը պատահի շատ անգամ։

— Կըսուի թէ կայս. կառավարութիւնն որոշած է առ այժմ ի բաց թողուլ Օսմանեան արժեթղթոց միացման խնդիրն։

— Թուրքիոյ մէջ արհեստից զարգացման խնամ տանելու նպատակաւ Արհեստական Սենեակ մը կազմուեցաւ ընդ տրամադրութեամբ արհեստական տեսչին։ Այս սենեկի անդամք, յորս կը գտնուին այլ և այլ աղգէ արհեստական պաշտօնատարք և պետք, շաբաթը մի անգամ պիտի ժողովին Սուլթանն Ահմէտի արհեստական վարժարանին մէջ։

— Կայս. կառավարութիւնն որոշած է Թուրքիոյ օտար նամակատանց փակման խնդիրը ժամանակ մ'առկա թողուլ։ Այս տնօրինութիւն շաբթոյս սկիզբը բերանացի ծանուցուեցաւ դեսպանաց։

— Թուրքիոյ վիճակահանութեանց համար կանոնադիր մը պատրաստուած է

կայս իրատեով վաւերացուած է : Այս կանոնագիր առ այժմ միայն Արեւելեան երկաթուղւոյ բաղադատմանը կը վերաբերի, որք այսուհետեւ պիտի դրոյմունք, հատին մէջ զորոշուողը վճարելով :

— Առեւտրական և երկրագործական նախարարութիւնը մաքսատան տեսչութեան հետ համաձայնութեամբ, որոշած է այսուհետեւ մաքսատուրք չառնուլ Եւրոպայէն թուրքիա բերուած երկրագործական մեքենայներու և գործիքներու համար :

— Ի նպաստ Չարլանպայի հրկիզելոց Տըբալիզոնի և Ջանիկի մէջ ցարդ 24,554 ՂՀ հաւաքուելով, անմիջապէս ղրկուեր է :

— Կ. Պօլսոյ և Ղալաթիոյ առեւտրական հինգ առևներ սնանկացան չարթուն մէջ, չրէպ սեղանաւոր մը 30,000 ոսկի բացով, Մանչէսթըրի ապրանքային փաճառատուն մը 25,000 ոսկեյ բացով, մետոքսի փաճառատուն մը 15,000 ոսկեյ բացով, յոյն փաճառական մը 12,000 և փոքր փաճառատուն մը 2000 ոսկեյ բացով :

— Կըսուի թէ Անգլիական Դահլիճն թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան գիր մ'ուղղելով շորհակալութիւն մատուցած է առ Վեհ. Սուլթանն այն հաշտարար և ուղղամիտ ընթացքին համար որուն հետեւած է Օսմանեան պատուիրակը Լոնտոնի Եգիպտական դեսպանախորհրդոյն մէջ :

— Մարդահամարի գործողութեանց վերաբերեալ կառավարական հրահանգները կիրակի օրն կարդացուեցան Հայ եւ Յոյն եկեղեցեաց մէջ :

— Գարատաղի դատական նախարար Պ. Պօղօ Բեգրովիչ չարթ օրը վերադարձաւ ի Չէթինէ ուր ծերակոյտին պիտի ներկայէ Կ. Պոլիս բնակող գարատաղցոց Բ. Դրան առջեւ ունենալիք իրաւասութեանց սահմանը ճշդող դաշնագրի մը ծրագիրն : Նախարարը Վեհ. Սուլթանին ընծայ բերած էր զոյգ մը ծանրագիրն ատրճանակ և թուր մը : Մայրաքաղաքիս Գարատաղի գործակալտար Պ. Վաքօվիչ Պ. Բեգրովիչի հետ մեկնեցաւ :

— Մայրաքաղաքէս Վիէնայի լրագրի մը ուղղեալ տեղեկութեանց համեմատ, թուրքիոյ և Ռուսիոյ միջեւ առեւտրական խոր դաշնագրի մը կնքման համար կատար-

ուած բանակցութիւնը աւարտելու վրայ են իսկ Ագլիոյ հետ կատարուած բանակցութիւնը դանդաղ կընթանան :

— Պետական խորհրդոյ ելմտական ճիւղը ելմտական նախարարութեան հետ կղբաղի այս պահուս կառավարութեան եկամտից գանձման նոր եղանակ մը ծրագրել :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

— Չորեքշաբթի օրը մայրաքաղաքիս քանի մը թաղերուն մէջ սկսաւ մարդահամարի գործողութիւնը, բայց կառավարութենէն տրուած հրահանգաց համաձայն չլինելուն պատճառաւ Պատրիարքարանն երէկ դիտողութիւններ ըրաւ մարդահամարի կեդրոնական յանձնաժողովին : Կըսեմք թէ դիտողութեանց կարեւորութիւն տրուեր և մարդահամարի պաշտօնակալք ի բարեկարգութիւն հրաւիրուեր են :

— Աղգային ժողովը երէկ գումարեցաւ ի Ղալաթիա, առեւտրականութեամբ Տիգրան էֆէնի Եոսուֆեանի, և զբաղեցաւ ելմտացոյցի խնդրոյն վիճաբանութեամբ զոր կը շարունակէ չորս նիստէ հետէ : Ներկայ էին իբր 40 երեսփոխանք : Թեր ու դէմ զանազան առեւտրականութիւններէ յետոյ, ի դիմաց Տնտեսական Խորհրդոյ Ամանարական էֆէնի ելմտացոյցին վրայ բացատրութիւններ տալով, յայտարարեց թէ Կոստանթնուքէ բառն սխալմամբ դրուած է դասախարակութեան յատկանալի գումարին, զի Պատրիարքարանի բոլոր եկամուտներն արդէն դժուարագանձելի վիճակի մէջ կը գտնուին : Այս յայտարարութեան վրայ, ներկայացեալ այլեայլ առջարկութիւնք ետ առնուելով, երեսփոխանք համաձայնութիւն դրոյացուցին և հետեւեալ բանաձեւը ընդհարկեցաւ միաձայնութեամբ .

«Ազգ. ժողովը կ'ընդունի վարչութեան կողմէ ներկայացեալ 1884—85 տարւոյ ելմտացոյցն, ընդելով 90,000 զրէի գումարի մը համար նշանակեալ «զբժուարագանձելի» հանգամանքն ու այս գումարի մը նացեալ 8 ամսոյ համար 22,500 զրէ կրօն. ժողովոյ և 22,500 զրէ Ուս. Խորհրդոյ արամորթութեան ներքե կ'ընելով :

— Աղգային ժողովը կը կարգէ հաւ. յանձնախումբ մ'որոյ պաշտօնը պիտի լինի պատրաստել յաւաքեալ Սահմանադրական տարւոյ համար ելմտացոյց մը, Խորհրդակցելով վարչութեան հետ և ազգի կընթակոն ու կրօնական գիտողից գոհացում տալուն համար

յարմար դուստրները սահմանելով, քննել արոց կանոնադրին անգործարութեան պատճառներն և Աշգային կեդրոնական Մատուկի ուղղակի և անուղղակի հարողթները անձեցնելու միջոցներ դնել և տեղեկագրել : »

— Ամեն Ս. Պատրիարք Հօր առողջական վիճակը, թէ և լաւագոյն, սակայն ենթակայ է միշտ ակտիւն քակից փոփոխութեանց, այն է հին չաքարի ակտիւն վրայ վերջին օրերս աւելցած աւելանքէն, որոյ հետեանքը օրտին կը ներգործէ : Կատարեալ առողջութիւն մը կարենալ ապահովելու համար կըրկնակի խնամոց կարօտ է, բարոյական և ֆիզիքական, այն է մտաց անդորրութեան և երկարատեւ դադարման :

— Շարժուս սկիզբը վախճանեցաւ Ամասիոյ առաջնորդ Գեր. Եղեսեան սրբազան :

— Մայրաքաղաքիս Թաղական Խորհրդոյ գրագիրք եւ Մխթարք Պատրիարքարանի մէջ ժողովուելով այս չաքիւ, կարեւոր հրահանգներ ընդունեցան մարդահամարի գործողութեանց համար :

— Իւսկիւտար Սէլամիյէ թաղի բնակիչներէն Գուրտեան Կարապետ աղա դատ բացած է Ամեն Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր դէմ, կտակային խնդրոյ մը համար :

— Գեր. Տ. Կարապետ Մ. վարդապետ Բաղրատունի Տիարպէքիի առաջնորդական փոխանորդ ընտրուած լինելով, պատրիարքարանէն հեռագրուեցաւ թէ պէտք է մէկը ցուցնել, որ նորա ուղևորութեան ծախքն հոգայ :

— Կիւրինի առաջնորդ Գեր. Տ. Ղևոնդ Եփեսոսոյ Երչմանեան ճամբայ ելած է մայրաքաղաքս գալու համար :

— Երուսաղիմայ պարտուց բարձման ի նպատակ հանգանակութեան խնդիրն աղային ժողովոյ ներկայելու համար, պատրիարքարանը տեղեկութիւն խնդրած է եւ մտական նախարարութենէն թէ ո՛ր նահանգին մէջ քանի՜ լուսաւորչական Հայք եւ ո՛ր չափ զինուորական տուրք կը վճարեն : Քանի մը նահանգներէն այս ծանօթութիւնը հասեր են երմտական պաշտօնատուներ, և դեռ չպատասխանողներուն հեռագրուեր է փութացնել :

— Երուսաղիմայ պարտուց բարձման յանձնաժողովն յունիս 16ին իւր հրաժարագիրն Ամեն Ս. Պատրիարք Հօր մատուցանել է և նոյն ամսոյն 21ին զայն կրկնել :

յետոյ, դեռ կը շարունակէր իւր աշխատութիւններն : Յանձնաժողովն Աղգ. վարչութենէն ցարդ որ եւ է գեկոյց մ'ընդունած չլինելով, իւր գործերն անհրաժեշտ եւ ամեն ինչ յանձնուելու վիճակի մէջ դրած, երեքշաբթի օրը թողորովին փակեց գրասենեակը :

— Քաղաքական ժողովն այս չորեքշաբթի իւր շաբաթական նիստն ընելով, գրադեցաւ քսանէ աւելի յարաբերական խնդրոց կարգադրութեամբ : Գլխաւորաբար որոշեց 1⁰. Գրել Պոյաճը — գիւղի Թաղական Խորհուրդին որպէս զի գիւղին եկեղեցոյն չնութեան ի նպատակ Թատերական ներկայացումէ մը գոյացեալ դուստրն յանձնէ եօթ օրուան մէջ : 2⁰. Վաւերացնել Տէրունեան Արժ. Մաղաքիս վարդապետի նախաձեռնութեամբ Պէհէսնիէի մէջ սահմանադրապէս կազմեալ Թաղական Խորհուրդն : 3⁰. Կինճի դաւառակէն, Վանէն, Քիլիկի և Մուշէն նորագոյն դէպքեր ծանուցուած և մասնաւորապէս Սիւլէյման և Օսման պէյերու համար ծանր գանդատներ հասած լինելով ի Պատրիարքարան, ինչ ինչ տնօրնութիւններ ըրաւ, ասոնց դարման տանելու համար : 4⁰. Տիւրքիի աղգայինք բաղմաթիւ խնդրադրովք բողոք բարձած լինելով թէ իրենց նորակաւոյց վարժարանը թնամական դիտմամբ պրացաւեր ըրած են, և միանգամայն վարժարանին վերադնութիւնը խնդրած լինելով, Քաղաքական ժողովը պատշաճ դատեց խնդրել Բ. Դըրնէն որ Պէյ — պապարի հրկիզելոց ի նպատակ հանգանակեալ դուստրէն բաժին մը հանուի յիշեալ վարժարանին վերադնութեան համար :

— Անցեալներն Ակնայ Աղըն գիւղէն Հայ կին մը իւր դեռատ որդեկին հետ ի Մահմետականութիւն տարուած լինելով, Ակնայ առաջնորդարանն որդեակն իբրեւ անչափահաս ուզած էր եւ չյաջողելով Պատրիարքարան գրած եւ անտի Բ. Դրան հաղորդուած էր : Այժմ Բ. Դրանէն պատասխան տրուած է Պատրիարքարանի մօրըքով թողուլ զանի, եւ չափահաս լինել յետոյ յարուցանել այդ խնդիրն :

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԷ ԼՐԱԳՈՅՑ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԼՊՈՒՐ ՄԱԼՈՑ

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿ

ՎԷՊ ՄՐՏԱԳՐԱԻ ԵՒ ՀՐԱՀԱՆԳԻԶ

Պատկերի ճեմարանէ Ծրանայի
Թարգմանութեան Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ
ՀԱՏՈՐ Բ.

Կը գտնուի ամեն հայ գրավաճառաց քով, և Պահճէ գաբու ջրավաճառ Պողոս և Յակոբ աղաներուն խանութները. գին 7 1/2 զրուշ:

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ

Ալէքսանդր Բաշալեան Տնտեսութեան 6 զշ.	
Կարօ Մարտիկ Երզնէ 2 Հա.	12
Աւետիս Բաշալեան Փարէշէ	6
Մարտիկ Երզնէ	7 1/2
Յիւրի Երզնէ	7 1/2

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՆՊԱՐԵՂԻՆԱՑ

Պարէշ — Երզնէ Թարգմանութեան Եր. 59

Միգրոն է՛ք. Տէօքլէճեանի վաճառատան մէջ կը գտնուին նպարեղինաց վերաբերեալ ամեն տեսակ ապրանքներ, որոյիսիք են, խանգի, ատվորական, լաւ եւ ընտրադոյն (մարթինիքա), չաքար, Մարտիկոյ և Թրէս տէի, այլ և այլ տեսակ ըսբարմաչէթներէ դատ, Ֆրանսական բուն Ֆուրնիէ. Միսլիի Թարմ եւ ընտիր իւղ. Նարբոլի մաքարոն, ճէնովայի եւ Նարբոլի շէշիլի. բրինձ, Մախսուսէ և Տիգոն. լուրիա և սիսեռն, եփուն և խոտ համեղ. անուշեղէնի և խմորեղէնի յատուկ լաւագոյն ալիւր. օսլայ (նիլասթա) և արարթ. Գանտիոյ եւ Այվալքի ընտիր աճառ. Լոնտոնի և Մարսիլիոյ քօլա. Ամերիկայի քարիւղ (կաղ). Լոնտոնի ընտիր լեղակ (շիվիտ). քօնեակ եւ այլ ոգելից ըմպելիք. սօտա. Թարմ ըսթաքօղ և սարտին. Սյվալքի ընտիր ձէթ. Թարխանա և պուրկուր. մէկ խօսքով, սոյն վաճառատան մէջ կը ծախուի ամեն տեսակ ներքին լաւագոյն այն սիտանի բաներու, որք առեւտրական սոյն ճիւղին կը վերաբերին գլխաւորապէս:

Ամեն յանձնարարութիւն կը կատարուի ուղղութեամբ և կանոնաւորապէս:

Գիները խիստ չափաւոր են: ԱՊԱՌԻԿ ԶԿԱՑ:

ԿՈՒՆԵԼԹ-ԻԻԼ-ԼՈՒՂԱԹ

ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԵ Ի ԹՈՒՐԲԵՐԵՆ

Աշխատասիրողը

Մէհմէթ Երզնէ և Մէհմէթ Աշէն

Պաշտօնեայք հասարակաց կրթութեան

Գրաքննութեան սենեկի

Հրատարակիչ

Գրէթէն Պաշտպան

Հրատարակուեցաւ Բ. հատորին 15-րորդ տետրն ևս: Այս առթիւ կը ծանուցուի թէ բաժանորդագրութիւնը փակուած է:

Ա.Զ.Դ.

Կայսերական պալատան ատամնաբոյժ Տօքթ. Քալիարօբուլօ պատիւ ունի ծանուցանել իւր յաճախորդաց և պատուարժան հասարակութեան թէ Այնօրօղի վանքն ուղեւորութենէն վերադարձած լինելով, հաստատուած է Բերա, մեծ փողոց, Պօն Մարշէի փողոցին ծայրը սուղի վերաբերեալ նիւթեղինաց վաճառատան վերնայարկն, ուր բացի կիրակիէն ամեն օր հիւանդ կընդունի, առաւօտեան ժամն 8 էն (եւր.) մինչեւ երեկոյեան ժամը 8:

ԳՈՒԻՆ

Ա.Ն.Գ.Լ.Ի.Ա.Կ.Ա.Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՇԻ ԴԵՄ

ՌԸԼԻԵՆՍ

Ծովային ապահովագրութիւն: -Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիլիամ, Եօրկիատիս խան, Պահչէ - գաբու, Պոլիս. կամ Ղալաթիա, Ալէքսիատի խան թիւ 15: